21 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 23(5106)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Հետադարձ հայացք Ղարաբաղյան շարժմանը

Հետադարձ հայացք գցելով Ղարաբաղյան շարժմանն ու Շուշիի ազատագրմանը՝ Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր **Արկադի Տեր-Թադեւոսյանը** երեկ, «Հենարան» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ, ասաց, որ Ղարաբաղյան շարժման տարիներին Հայաստանի այդ ժամանակվա ղեկավարությունը՝ գլխավորությամբ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, դեմ էր արցախյան գոյամարտի գործողությունների մեծ մասին: Եվ այն ժամանակվա ղեկավարությունը, ըստ Արկադի Թադեւոսյանի, փորձում էր հասնել խաղաղության՝ ձգտելով պահպանել Արցախն Ադրբեջանի կազմում: Արկադի Տեր-Թադեւոսյանը ասում է, որ բազմաթիվ անգամներ իրենց հետ կապվել են Երեւանից՝ պահանջելով դադարեցնել ռազմական գործողությունները: Ըստ նրա՝ եթե թույլ տային, Խոջալուի ազատագրումն ավելի վաղ կսկսվեր. «Լեւոն Տեր-Պետրոսյանը բանակցություններ էր վարում, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում, սակայն Ղարաբաղի ղեկավարությունը համաձայն չէր դրան»: Բայց անկախ խոչընդոտներից՝ հայ ժողովրդին հաջողվեց ազատագրել Արցախը: Սակայն Արկադի Տեր-Թադեւոսյանն ասում է, որ 1994-ին կնքված զինադադարի փոխարեն պետք է կնքվեր հաշտության պայմանագիր. «Եվ հարցը փակվեր վերջնականապես»: Ըստ նրա՝ Ադրբեջանի հասարակությունն այսօր պատրաստ չէ ռազմական գործողությունների, հետեւաբար կարելի է վստահ ասել, որ ռազմական գործողություններ չեն սկսվի, եւ Ղարաբաղյան հարցի կարգավորման գործում մոտակա տարիներին կտրուկ զարգացումներ չեն լինի:

«Եթե երկու կողմերը չեն ուզում պատերազմել, ապա պատերազմ չի լինի: Իսկ եթե կռիվ լինի, կլինեն մեծ կորուստներ, բայց հաղթանակը մերը կլինի», ավելացրեց Արկադի Տեր-Թադեւոսյանը:

**Ի. Պ.**



# Րաֆֆի. Սա սիրո պայքար է




**ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Ո՛չ Րաֆֆի, ո՛չ Սերժ, ո՛չ Ռոբերտ, ո՛չ Լեւոն: Այսուհետեւ միայն Հայաստան եւ հաղթանակ»: Ազատության հրապարակում հավաքված բազմությանը, որ բղավում էր «Րաֆֆի, Րաֆֆի», այսպես դիմեց «Ժառանգության» առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանը**՝ հայտարարելով, որ այս հավաքով սկիզբ է դրվում Հայաստանի հաղթանակի ճանապարհին: Երկու օր առաջ տեղի ունեցած ասուլիս-հանրահավաքում Րաֆֆի Հովհաննիսյանը մեկ օր ժամանակ էր տվել նախագահ Սերժ Սարգսյանին, որպեսզի իր հետ հանդիպի եւ կազմակերպի իշխանության փոխանցումը ժողովրդին: Մինչ հանրահավաքի մեկնարկը Սարգսյանի մամուլի խոսնակ **Արմեն Արզումանյանը** հայտարարել էր, որ Ս. Սարգսյանը միշտ էլ պատրաստակամ է եղել հանդիպելու բոլոր քաղաքական ուժերի եւ նրանց առաջնորդների հետ յուրաքանչյուր անհրաժեշտության դեպքում:

«Միջազգային բոլոր դիտորդական առաքելություններն արձանագրեցին, որ 2013 թվականի նախագահական ընտրությունները լավագույնն էին ՀՀ 21-ամյա պատմության մեջ: Սա կատարված անհերքելի աշխատանքի գնահատականն է, որը չի կարող չոգեւորել: Այս ֆոնին պարոն Հովհաննիսյանի հայտարարությունները առնվազն տարակուսանք են հարուցում», ասել է նախագահի մամուլի խոսնակը:

«Մենք հաղթանակած ժողովուրդ ենք, այսօր եկել է այն պահը, երբ ես եւ դուք՝ բոլորս, պետք է մեղքեր քավենք եւ նայենք դեպի ապագան: Ես էլ ունեմ մեղքեր եւ այս պայքարի միջոցով կքավեմ հանուն մեր երկրի, հանուն մեր զավակների: Եթե մինչեւ ժամը վեցը չգա եւ ներողություն չխնդրի՝ պատասխան է տալու: Սա Սահմանադրություն է, ոչ թե ողորմություն: Սա սիրո պայքար է: Սա Սովետ չէ կամ Օսմանյան կայսրություն: Սա Հայաստանի Հանրապետություն է, որտեղ հանցագործը պետք է պատժվի, անկախ նրա պաշտոնական դիրքից,- ասաց Րաֆֆին՝ դիմելով բազմությանը,- դուք պատրա՞ստ եք: Պատրա՞ստ եք մնալ մինչեւ վերջ, պատրա՞ստ եք հանուն ազատ անկախ Հայաստանի»: «Այո, պատրաստ ենք», բացականչեց բազմությունը:

Տես էջ 2

# Սումգայիթի կոտորածին նվիրված քննարկումներ Չեխիայի խորհրդարանում

*Խոջալուի մասին բանաձեւ ընդունած չեխական հանձնաժողովը բավարար տեղեկություններ չի ունեցել*



Չեխիայի խորհրդարանում երեկ հայ-չեխական բարեկամության խմբի նախագահ Ռոբին Բյոհնիշի նախաձեռնությամբ սեմինար անցկացվեց ղարաբաղյան հակամարտության 25-ամյակի թեմայով՝ ուշադրության կենտրոնում ունենալով Սումգայիթը: Սեմինարին հրավիրված էին նաեւ խորհրդարանի Պատգամավորների պալատի (ստորին պալատ) արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամները, ովքեր ստորագրել են Խոջալուի դեպքերի առնչությամբ հակահայ բանաձեւը:

Նախ Բյոհնիշը նշեց, որ Չեխիան ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Ադրբեջանի հետ շատ լավ հարաբերություններ ունեցող պետություն է: Մասամբ դա հաջողվում է այն պատճառով, որ չեզոք դիրք ունի ղարաբաղյան հակամարտության խնդրում: «Մեր հավասարակշռված դիրքորոշումը մնում է հաստատուն: Ժամանակ առ ժամանակ որոշ խորհրդարանականներ արտահայտվում են այս կամ այն կողմի օգտին: Սա նորմալ է: Երկարաժամկետ ու բարդ հակամարտություններում անհատների համար դժվար է չեզոք մնալ: Խորհրդարանականների անունից պետք է ասեմ՝ ներողություն, որ մեր դիրքորոշումները, հայտարարությունները սխալ են հասկացվում կամ չարաշահվում են», ասաց Բյոհնիշը ու շեշտեց, որ այդպես եղավ նաեւ երեկ, երբ ադրբեջանական մամուլը հրապարակեց ընդունված բանաձեւի տեքստը՝ նախքան դա պաշտոնապես կաներ հանձնաժողովը, մինչդեռ աշխատանքները դրա կասեցման ուղղությամբ դեռ շարունակվում էին:

Տես էջ 2

# Հարկասուների նկատմամբ վարչական տուգանք չի կիրառվի

*Հանձնարարել է վարչապետ Տիգրան Սարգսյանը*

**Կառավարության հասարակայնության հետ կապերի վարչությունից տեղեկացանք, որ երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն, որտեղ քննարկվել է 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» օրենքի այն 13-րդ հոդվածը, համաձայն որի, հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, բացառապես էլեկտրոնային եղանակով, հարկային մարմիններ ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:**

**Հաշվի առնելով, որ նոր հաշվետվության տեսակի ավելացմամբ կտրուկ աճել է էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնող հարկասուների թվաքանակը, ինչի արդյունքում ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի համակարգի եւ ՊԵԿ հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջեւ անխափան աշխատանքի հետ կապված տեխնիկական խնդիրներ են ի հայտ եկել, վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարել է, որ այդ պատճառով հարկային մարմիններ ուշացումով ներկայացրած հարկասուների նկատմամբ չկիրառվեն վարչական պատասխանատվության միջոցներ:** **Ա. Մ.**

# ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը՝ միջազգային դիտորդների նախնական գնահատականին աջակից

Եվրոմիության արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնն ու ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն ի գիտություն են ընդունել փետրվարի 18-ի ընտրությունների նախնական արդյունքները եւ ողջունել Միջազգային ընտրական դիտորդական առաքելության նախնական եզրակացությունները:

Երեկ պաշտոնապես հրապարակված համատեղ հայտարարությամբ եվրոպական պաշտոնյաները ողջունել են Հայաստանի իշխանությունների գործադրած ջանքերի առաջընթացը՝ նախագահի ընտրությունները միջազգային ստանդարտներին համապատասխան անցկացնելու ուղղությամբ, հատկապես ընտրական գործընթացի կատարելագործված վարչարարությունը, թեկնածուների համար քարոզարշավն ազատորեն անցկացնելու հնարավորությունների եւ ընտրացուցակների ավելի բարձր որակի ապահովումը:

Միեւնույն ժամանակ, Եվրոմիությունը ակնկալում է որոշ ցցուն մտահոգությունների հարցում հետեւողական լինելու մոտեցում, որը պետք է վերաբերի ծառայողների կողմնակալ դրսեւորումներին, վարչական ռեսուրսի օգտագործման մասին հայտարարություններին, քարոզարշավի ֆինանսավորման հայտարարությունների ոչ հստակ մեկնաբանություններին եւ այլն:

Միջազգային դիտորդների նախնական գնահատականների առնչությամբ աջակցություն է հայտնվել նաեւ Միացյալ Նահանգների անունից, մասնավորապես՝ ի դեմս ԱՄՆ պետքարտուղարության մամուլի խոսնակ Վիկտորիա Նյուլանդի: Վերջինս փետրվարի 19-ի հերթական ճեպազրույցում, պատասխանելով հայաստանյան ընտրությունների մասին հարցին, նշել է, որ ԱՄՆ-ը աջակցում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի նախնական եզրակացություններին առ այն, որ ընտրություններն ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված եւ բնութագրվել են հիմնարար ազատությունների՝ ներառյալ հավաքների եւ խոսքի ազատության հանդեպ հարգանքով: Դրա հետ մեկտեղ Նյուլանդը նշել է միջազգային դիտորդների այն մտահոգությունները, որոնք կապված են վարչական ռեսուրսի օգտագործման, որոշ կողմնակալության եւ այլ խախտումների հետ, ըստ որում՝ դրանք կարիք ունեն հետաքննության:

**Վ. Պ.**

# Արցախյան գոյամարտի 25 տարին

Երեկ լրագրողների հետ էր հանդիպել «Ազատագրական բանակ» ջոկատի մարտիկ, «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար **Գագիկ Գինոսյանը**:



«Հայրենիքը չեն սիրում օրվա ռեժիմի համար, այն մի երեւույթ է, որին սիրում են անկախ օրվա ռեժիմից, հայրենիքի համար ոտքի ելնելը, զենք վերցնելը ոչ մի բանի հետ կապ չունի». Գ. Նժդեհի խոսքերը մեջբերելով Գ. Գինոսյանն ասաց, որ այն ժամանակ պեսականություն չունենալով հանդերձ իրենք գնացին մարտի, եւ հիմա եւս պատրաստ է հարկ եղած դեպքում գնալ. «Լեոնիդ Ազգալդյանը, Ալեքսանդր Թամանյանը, Մոնթե Մելքոնյանը եւ մնացած որեւիցե մեկը չի գնացել մարտի իշխանության ձգտելու նպատակով: Իրական մարտիկները անում են այն, ինչ հայրենիքը իրենցից պահանջում է: Լեոնիդ Ազգալդյանը մարտի դաշտից չվերադարձավ, սակայն իմ մյուս հրամանատարը՝ Ալեքսանդր Թամանյանը, երբ վերադարձավ, առաջարկեցին բարձր պաշտոն ռազմական ուժերում: Նա հրաժարվեց ասելով՝ զենք եմ վերցրել ժամանակի պահանջով, երբ դրա կարիքն ուներ հայրենիքը, իսկ հիմա պետք է վերադառնալ գիտություն, որը մեր կարիքն ավելի շատ ունի: Ա. Թամանյանի համոզմունքն էր, որ յուրաքանչյուր հայ մտավորական պետք է լինի այնտեղ, որտեղ նրա կարիքը առավել կա, եւ այն պահին, որ պահին կզգան:»:

Գ. Գինոսյանն ընդգծեց, որ այժմ պետք է առաջնորդվենք Նժդեհի ուսմունքով. «Ցույց տուր հակառակորդին, որ դու իրենից ուժեղ ես, եւ նա մեկընդմիշտ կհրաժարվի քո վրա հարձակվելու առաքելությունից»,- եւ ավելացրեց. «Մեր առաջ գնալու միակ բանաձեւը պետք է լինի սա: Մենք միշտ պետք է այդ ուժն ունենանք եւ ապացուցենք հակառակորդին, որ իրոք իրենից ուժեղ ենք, եւ մեկընդմիշտ կհրաժարվի մեզ վրա հարձակվելու ցանկությունից»:

«Ինչպես ասում է Նժդեհը, վատն է այն հրամանատարը, որ իր խոսքի ուժով չի կարող տասնապատկել զինվորի ուժը, իսկ մենք ունեցել ենք հիանալի հրամանատարներ: Մեր հաղթանակը պայմանավորված էր նրանով, որ մենք կամավորներ էինք, իսկ ադրբեջանցի զինվորներին ուղղակի ստիպում էին գնալ ռազմի դաշտ, ինչպես նաեւ նրանք ունեին վարձկան զինվորներ՝ ուկրաինացիներ, չեչեններ, աֆղաններ», եզրափակեց Գ. Գինոսյանը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Րաֆֆի. Սա սիրո պայքար է

*1-ին էջից*

«Ես էլ եմ պատրաստ, ուրեմն սպասենք մինչեւ ժամը 6-ը», ասաց Հովհաննիսյանը՝ հավելելով, որ Հայաստանի նորանկախ պատմության ընթացքում հաղթանակներ են տարել Վազգեն Մանուկյանը, Կարեն եւ Ստեփան Դեմիրճյանները, սակայն այս անգամ հաղթանակը բարոյական չի լինելու եւ պատկանելու է ժողովրդին: Նա կոչ արեց քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչներին՝ միանալ իրենց եւ առաջին անգամ տոնել ընտրված նախագահին:

Մինչ ժամը 6-ը Հովհաննիսյանը որդու եւ Նիկոլ Փաշինյանի ուղեկցությամբ իջավ եւ ձեռքով սկսեց բարեւել հավաքված ժողովրդին: Այդ ընթացքում բեմահարթակ եկան ՀԱԿ նախկին անդամ Կարապետ Ռուբինյանը, Տիգրան Խզմալյանը, Դաշնակցությունից Լիլիթ Գալստյանը, իսկ հանրահավաքին հեռվից հետեւում էին ԱԺ նախկին նախագահ Տիգրան Թորոսյանը, քաղաքագետ Հմայակ Հովհաննիսյանն ու երգիչ Արթուր Իշխանյանը:

Մեկ ժամ անց, երբ Բաղրամյան 26-ից որեւէ հայտարարություն չեղավ, Րաֆֆին կրկին բեմահարթակում էր: «Սա պայքար է, որ մեզ տանելու է դեպի հաղթանակ, այլեւս ոչ մի ողբ, լաց, կոծ, եւ նահանջ, ոչ մի ծոմ, մենք մեր երկրի, իշխանության տերն ենք: Միակ թագավորը՝ Սահմանադրությունն է, իսկ թիվ խփելու է ժողովուրդը: Մենք հարգելու ենք բոլորին, սակայն չենք ներելու նրան, ով խախտեց կամ յուրացրեց: Ես քրիստոնյա անձնավորություն եմ, սակայն դա ի՞նչ կապ ունի, երբ զույգ վեհափառները շնորհավորեցին կեղծված ընտրություններում հաղթանակ տարած մարդուն: Պուտինը պետք է լավ մտածի, ես ԱՄՆ-ում եմ ծնվել-մեծացել, որովհետեւ Ցեղասպանության վերապրածի թոռն եմ: Ով ժամանակից շուտ շամպայն խմեց, նա զղջալու է հայ ժողովրդի առջեւ: Ես գնալու եմ միայն հայ ժողովրդի ինագուրացիային»:

Դիմելով նախագահին եւ իշխանություններին՝ Րաֆֆի Հովհաննիսյանն ասաց, որ այն, ինչ անելու է ապագայում, անելու է ժպիտով, սիրով եւ բարությամբ: «Մեզ ասացին, որ վաղը այս հրապարակը «բռնյա» է արված, եւ Սերժ Սարգսյանն այստեղ հանրահավաք է անելու: Մենք ամբողջ գիշեր այս հրապարակում կմնանք եւ կսպասենք, երբ նա գա՝ մենք կդիմավորենք եւ հենց այս հրապարակում կկազմակերպենք իշխանության փոխանցումը: Այդ բանակցությունները մենք կանենք այստեղ՝ ձեր աչքի առաջ: Դուք պատրա՞ստ եք», ասաց Րաֆֆին՝ կրկին լսելով «այո» բացականչությունը:

Այնուհետեւ ելույթ ունեցան Նիկոլ Փաշինյանը, Կարապետ Ռուբինյանը, «Ժառանգության» պատգամավորները: Րաֆֆին հայտարարեց, որ հանուն հաղթանակի պատրաստ են ոչ միայն օրեր, այլեւ շաբաթներ անցկացնել, որպեսզի սկիզբ դրվի նոր Հայաստանի պատմությանը: Նա հավելեց, որ նոր կառավարության կազմում հաստատ տեղ ունի Անահիտ Բախշյանը, որն իր ելույթում գրեթե լացելով հիշեց հոկտեմբերի 27-ն ու հայտարարեց, որ հավատում է միայն Րաֆֆիին եւ համոզված է, որ նա կբացահայտի հոկտեմբերի 27-ը: Րաֆֆին հավելեց, որ ինքը չի իշխելու, աշխատելու է, հաշվետվություն է ներկայացնելու, եւ իրենք ակնկալելու են միայն ազնվություն եւ ճշմարտախոսություն: Ձեռի հետ, ինչպես ասում են, Րաֆֆին նշանակեց իր ապագա կառավարության 2 անդամների՝ Անահիտ Բախշյան եւ Նիկոլ Փաշինյան: Տեսնենք այսօր ինչ հավելումներ կանի:

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն առաջարկում է 2 տարի անսահմանափակ ինտերնետ Hayphone սմարթֆոն գնելու դեպքում

ՎիվաՍել-ՄՏՍ-ն ներկայացնում է Hayphone սմարթֆոնը՝ հիմնված Android օպերացիոն համակարգի վրա: Օգտագործման մեջ դյուրին, ոճային եւ միեւնույն ժամանակ մատչելի այս սմարթֆոնը հատկապես հարմար է նրանց, ովքեր չեն պատկերացնում իրենց կյանքն առանց ինտերնետային ռեսուրսների:




Սմարթֆոնն արժե 99000 դրամ, կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ: Գնելով Hayphone՝ բաժանորդը ստանում է անհամանման բոնուս՝ անսահմանափակ ինտերնետ, որը կարելի է օգտագործել 2 տարի ընթացքում: Տրամադրվող ինտերնետի առավելագույն արագությունը կազմում է 512 Կբիթ/վրկ:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՀԱԿ-ի եւ ՀՅԴ-ի գնահատականները նախագահական ընտրություններին

**Նախագահական ընտրությունների նախնական արդյունքների վերաբերյալ ոչ իշխանական հիմնական քաղաքական ուժերի գնահատականներն ուշանում են: Առայժմ հայտարարություն են տարածել Հայ ազգային կոնգրեսն ու ՀՅԴ-ն:**

**ՀԱԿ-ը փետրվարի 18-ի ընտրությունները հերթական խայտառակ ընտրություններ է անվանել եւ նշել, որ դրանք անցկացվել են ընտրակեղծիքների մեքենայի լիակատար օգտագործմամբ, կիրառվել են ընտրախախտումների բոլոր գործիքներն ու մեխանիզմները (դրոշմակնիքի ջնջվելը՝ որպես բազմակի քվեարկության հնարավորություն, բացակա 700 հազ. ընտրողների ձայների օգտագործում, ընտրակաշառքի բաժանում, ահաբեկման եւ բռնության դեպքեր, քվեատուփի լցոնումներ, հանձնաժողովներում հաշվարկի ժամանակ ձայների քանակի կեղծում): Դիտորդություններ են բաժին հասել նաեւ միջազգային դիտորդական առաքելություններին, որոնք դայակություն են անում Հայաստանի իշխանություններին եւ չեն նկատում կեղծման մեխանիզմները:**

**Իսկ ՀՅԴ գերագույն մարմինը, ներկայացնելով իր գնահատականները, նշում է, թե Հայաստանի քաղաքացիները փետրվարի 18-ին ապացուցեցին, որ իրենց համբերությունը սահման ունի, որ իրենք շատ ավելի լավ կյանքի եւ իշխանության են արժանի, ու մարդկանց մեջ անհնար է մեռցնել արդարության, ազատության ձգտումը, եւ որ ակնհայտ է դարձել, թե ժողովրդի գերակշիռ մասը գործող համակարգը չի ընդունում. «Խոստացված ամենալավ ընտրությունները հերթական շատ վատն էին: Արդյունքների ամփոփումն ապացուցեց մեր այն համոզումը, որ ընտրությունները կանխորոշված են, միջազգային դիտորդների գնահատականը՝ կանխատեսելի»: Ապա եւ նշվում է, թե փետրվարի 18-ին մեր ժողովրդի դրսեւորած կամքը չպետք է ոտնահարվի, ու ՀՅԴ-ն ժողովրդի կողքին է, համատեղ ուժերով լուծումներ գտնելու կողմնակից. «Մենք պարտավոր ենք գիտակցել պահի լրջությունը եւ ելքեր որոնել: Սա ծանր, բայց անխուսափելի աշխատանք է, որ պարտավոր ենք անել միասին», ասվում է հայտարարության մեջ՝ առանց այդ «միասինը» հստակեցնելու:**

# Սումգայիթի կոտորածին ...

*1-ին էջից*

**Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանն իր ելույթում շեշտեց, որ Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը դարձել է ադրբեջանական քարոզչության զոհը, Խոջալուի վերաբերյալ բանաձեւ ներկայացնելիս անտեսվել է Ադրբեջանի երբեմնի նախագահ Այազ Մութալիբովի պարզաբանումը, որ Խոջալուն կազմակերպվել էր ադրբեջանական ուժերի կողմից իրեն պաշտոնանկ անելու նպատակով:**

**Դեսպանի խոսքից հետո ցուցադրվեցին հատվածներ Մարինա Գրիգորյանի եւ Լարիսա Ալավերդյանի «Սումգայիթ. Սովորական ցեղասպանություն» ֆիլմից, նաեւ Ցվետանա Պասկալեւայի «Իմ սիրելի ողջեր ու զոհվածներ» ֆիլմը: Վավերագրության ազդեցությունն այնքան մեծ էր, որ բանաձեւը ստորագրած պատգամավոր Յան Կուբասան հայտարարեց, որ հանձնաժողովը բազմակողմանիորեն տեղեկացված չի եղել ու այսպիսի մանրամասներ չի իմացել Սումգայիթի եւ ղարաբաղյան պատերազմի սկսվելու մասին: Նա պնդեց, որ նպատակ չեն ունեցել ընդունել կողմերից մեկին պաշտպանող բանաձեւ, պարզապես ցանկացել են դատապարտել խաղաղ բնակչության նկատմամբ դաժան բռնությունները: Ի պատասխան՝ Պրահայում երեքօրյա այցով գտնվող Ցվետանա Պասկալեւան հորդորեց որեւէ փաստաթուղթ ստորագրելուց առաջ լավ ուսումնասիրել փաստերը եւ ապացուցել, որ Չեխիան չեզոք է այս հակամարտությունում եւ նույն հանձնաժողովում ընդունել սումգայիթյան իրադարձությունները դատապարտող բանաձեւ, հատկապես որ դրանց 25-րդ տարելիցը կնշվի օրեր անց:**

**Բուլղարուհի վավերագրողը հայտարարեց նաեւ, որ ղարաբաղյան պատերազմի մասին իր վավերագրական ֆիլմերը կոչ են աշխարհի քաղաքական գործիչներին՝ քաղաքական ցինիզմը փոխարինել քաղաքական կամքով եւ ճանաչել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, ինչից հետո հակամարտ կողմերը կկարողանան հանդարտվել եւ ապրել իբրեւ հարեւան պետություններ:**

**Հայ-չեխական բարեկամության խմբի նախագահ Ռոբին Բյոհնիշը, որը եւս խորհրդարանի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ է (այժմ արդեն՝ նաեւ փոխնախագահ), չի մասնակցել հակահայ բանաձեւի քվեարկությանը, քանի որ, իր պարզաբանմամբ, այդ օրն օրակարգում նման հարց չի եղել, ուստի ինքը հարկ չի համարել ներկա լինել օրվա քննարկումներին:**

**Սեմինարի ընթացքում ե՛ւ Բյոհնիշը, ե՛ւ բանաձեւը ստորագրած պատգամավորները հայտարարեցին, որ անհրաժեշտ է նոր քննարկումներ անցկացնել Խոջալուի դեպքերի առնչությամբ: Յան Կուբասան նշեց, որ ինքը հավատում է խորհրդարանական երկխոսությանը, եւ դա է պատճառը, որ անդամակցում է ե՛ւ չեխ-հայկական, ե՛ւ չեխ-ադրբեջանական, ե՛ւ չեխ-վրացական, ե՛ւ չեխ-թուրքական բարեկամության պատգամավորական խմբերին:**

**Սեմինարի աշխատանքներին մասնակցում էր նաեւ չեխ լրագրող Դանա Մազալովան, որը կրկին, իբրեւ դեպքերի ականատես, հերքեց ադրբեջանական քարոզչամեքենայի տեղեկությունները եւ մեղադրեց բանաձեւը ստորագրած չեխ պատգամավորներին, ովքեր կուրորեն հետեւել են ադրբեջանցիների հրամցրած նյութերին եւ հարկ չեն համարել բացել չեխական թերթերի արխիվներն ու կարդալ իր ու այժմ Չեխիայի խորհրդարանի վերին պալատի պատգամավոր Յարոմիր Շտետինայի այն ժամանակ տեղից ուղարկած հաղորդագրությունները:**

«Օրեր» ամսագիր
Պրահա

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ Աարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

ԱԶԳ

Անցուդարձ

# Վազգեն Մանուկյան. Րաֆֆի Հովհաննիսյանը երկու ճանապարհ ունի

«Երրորդ հանրապետության պատմությունը սկսվեց ոչ թե այն օրից, երբ մենք ֆորմալ իրավաբանորեն անկախություն ստացանք, այլ 1988-ի փետրվարից, երբ «Ղարաբաղ» կոմիտեի հետ ժողովուրդը ոտքի կանգնեց: Հենց այդ ժամանակ առաջին անգամ արտասանվեց «Մենք չունենք մշտական բարեկամ կամ մշտական թշնամի, մենք ունենք մշտական ազգային շահ» արտահայտությունը, շարժումն է հիշում Հանրային խորհրդի նախագահ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ **Վազգեն Մանուկյանը**: Արցախյան շարժման առաջամարտիկը ցավով է նշում, որ այսօր անցյալը մոռացության է մատնվել, շարժման մասնակիցներն իրենց վերագրում են արարքներ, հաղթանակներ ու նվաճումներ, որոնց հետ կապ չեն ունեցել, իսկ երիտասարդության հետաքրքրությունն էլ մեծ չէ: «Սա մեր նորագույն պատմությունն է, բայց արդեն մոռացված է», ասում է Մանուկյանը՝ հավելելով, որ շարժումը զգացմունքային չէր: Զգացմունքներով չէին առաջնորդվում, այն լոկ շարժիչ ուժ էր, գերակշռող էին պրագմատիկ եւ սառնասիրտ քայլերը: «Շարժման արդյունքում կարողացանք ձեռք բերել անկախություն: 5000 էթնոս կա աշխարհում եւ միայն 200 պետություն: Մենք այդ երջանիկներից ենք: Շարժման երկրորդ կարեւորագույն ձեռքբերումը Ղարաբաղյան պատերազմում հաղթանակն էր, եւ վճռական նշանակություն ունի, որ այսօր հայկական հողը գտնվում է հայերի ձեռքում», ասում է Մանուկյանը՝ հավելելով, որ սխալներ էլ են եղել: «Կային բազմաթիվ մարդիկ, ովքեր ավելի մեծ պոտենցիալ ունեին, եւ հնարավոր էր ավելի մեծ արդյունքի հասնել, սակայն կաղապարների մեջ մնալով՝ սխալներ էլ եղան»:



1996-ից շատ բան փոխվեց, ու, ըստ Մանուկյանի, ընկանք ընտրական սխալ ցիկլի մեջ: «Ասել, որ այս ընտրությունները 100-տոկոսանոց իդեալական էին, սուտ կլինի, սակայն դրանք նախորդներից լավագույնն էին», հավաստիացնում է Հանրային խորհրդի նախագահը՝ հավելելով, որ առաջիկա ընտրությունների իրավիճակի տերը լինելու է ժողովուրդը: Նրա գնահատմամբ՝ այսօր հասարակությունը հիասթափված է: «88-ին այդպես չէր, մարդիկ համոզված էին, որ իրենց ձայնը ուժ եւ ազդեցություն ունի: Աստիճանաբար ժողովրդի հետ հաշվի չնստեցին, եւ այդ համոզումը կորավ: Սակայն համոզված եմ, որ հետագայում այդպես է լինելու, քանի որ ամեն բան, հատկապես եթե արատավոր է, աճում է, հասունանում, փտում եւ ընկնում»:

Մանուկյանը փետրվարյան ընտրությունները դժվարանում է համեմատել 1996-ին կայացած նախագահական ընտրությունների հետ, երբ պայքարում էին ինքն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը:

«96-ի ընտրությունները միակն էին, որ պրակտիկորեն թղթով ապացուցեցին, թե ի՞նչ է կատարվել: Մոտավորապես 65 տոկոս ընդդիմությունն էր հավաքել, իսկ 35 տոկոս՝ իշխանությունը, քանի որ այն օրերի օրենքը թույլ էր տալիս, որ հաշվարկից հետո մի օրինակ էլ տային թեկնածուի ներկայացուցչին: Բայց գիշերը ժամը մեկին ընդդիմության ներկայացուցիչներին ընտրատեղամասերից հանեցին, եւ թվերը փոխվեցին», ասաց Մանուկյանը՝ հավելելով, որ դրանից հետո եկող բոլոր ընտրությունների վերաբերյալ ասել են՝ ընտրությունները կեղծված են, սակայն ապացուցված չեն եղել:

«**Ազգի**» հարցին՝ «Ի՞նչ խորհուրդ կտաք Րաֆֆի Հովհաննիսյանին», Մանուկյանն ասաց, որ Րաֆֆին ընտրելու երկու ճանապարհ ունի. «Մեկը, որ ինքն ընդունում է եւ չի բողոքում, այդ տարբերակը երբեք չի եղել, որ թեկնածուն այդ ձեւով վարվի, չնայած Րաֆֆին անկեղծ համոզված է, որ հաղթել է: Միաժամանակ, եթե այդպիսի բան անի, կմեղադրեն, թե ծախված է, բայց նոր էջ կլինի: Երկրորդ տարբերակն այն է, ինչ միշտ արել են՝ գնալ հանրահավաքների ճանապարհով: Սակայն հիմա չկան այն լարվածությունն ու ատելությունը, որ կար 2008-ին, ու Րաֆֆի Հովհաննիսյանն էլ չունի այդ ներուժը, եւ հանրահավաքները կամաց-կամաց կմարեն»: Միաժամանակ Մանուկյանը համոզված է, որ Րաֆֆիի հավաքած 37 տոկոս ձայնը ոչ միայն հրաշալի նախընտրական քարոզարշավ անցկացնելու արդյունք է, այլեւ իշխանություններից դժգոհության: Նա խոստովանում է, որ ընտրությունների արդյունքներն ապացուցեցին, որ իշխանությունից դժգոհությունն ավելի մեծ է, քան կարելի էր սպասել: Այս պարագայում իշխանությունը դա պետք է հաշվի առնի: Թե ո՞նց ու ինչպե՞ս՝ Մանուկյանը չի մանրամասնում, միայն հավելում է, որ «մեր դեմ խաղ չկա» բանաձեւի ժամանակն արդեն անցել է: «Երբ հասարակությունը ձայն է բարձրացնում, որոշ դեպքերում գնում են զիջումների»: Մանուկյանը նաեւ համոզված է, որ կլինեն անսպասելի փոփոխություններ եւ իրադարձություններ, որոնք իրեն չեն զարմացնի:

ՀՀ առաջին վարչապետը հույս ուներ, որ Հրանտ Բագրատյանն ու Պարույր Հայրիկյանը ավելի շատ ձայն կհավաքեին, սակայն քարոզարշավի ընթացքն այլ բան ցույց տվեց: Ինչ վերաբերում է Բագրատյանին՝ Մանուկյանը սարկազմով ասաց, որ նախկին վարչապետն ամեն ինչ իրեն է վերագրում՝ ինքն է օրենքներ ընդունել, ինքն է որոշում կայացրել ու պատերազմ հաղթել, մինչդեռ շատ ժամանակ Բագրատյանն ընդամենը եղել է կատարող, ենթակա:

«Հողերի սեփականաշնորհման ժամանակ Բագրատյանը շատ ներքեւում է եղել, որ որոշում կայացներ, բայց հիմա պարզվեց, որ ամեն ինչ ինքն է արել: Շատ դեպքերում ինքն անտեղյակ է եղել, քանի որ ուղղակի կատարող էր: Եթե խոսքը հողի սեփականաշնորհման մասին է, դա եղել է իմ վարչապետության ժամանակ, եւ դա եղել է քաղաքական որոշում: Այդ ժամանակ ինքը շատ ներքեւում էր գտնվում, որ քաղաքական որոշում կայացներ, ինքն ընդամենը իմ ենթական էր»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Բացվեց «Ամերիաբանկի» «Սայաթ-Նովա» մասնաճյուղը

**«Ամերիաբանկի» «Սայաթ-Նովա» մասնաճյուղը երեկ բացվեց Սայաթ-Նովա պողոտայում: Բանկի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն ասաց, որ այստեղ ներդրվել են ժամանակակից տեխնիկական միջոցներ, եւ ի թիվս բոլոր մասնաճյուղերում մատուցվող ծառայությունների, «Պրեմիում» հաճախորդներին առաջարկվելու են բարձրակարգ ծառայություններ:**

**Բանկի գլխավոր տնօրենն ասաց, որ այս մասնաճյուղում կառաջարկվի բանկային հաշվի անվճար բացում, նոր իրավաբանական անձի հաշվի անվճար բացելու դեպքում կազմակերպության երեք ղեկավարներին վարկային քարտի տրամադրում, մեկ տարում անհատական պահատուփերի նոր պայմանագիր կնքելու դեպքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց անհատական պահատուփերի տրամադրում սահմանված սակագներից 50 տոկոս զեղչով, չորս տարբեր չափերի պահատուփեր եւ այլն: Մասնաճյուղում աշխատում են 15 հոգի:**



**Ինչպես տեղեկացրեց Արտակ Հանեսյանը, նախատեսվում է այս տարվա ընթացքում եւս երկու մասնաճյուղ բացել Երեւանում, երկուսն էլ՝ մարզերում:** **Ա. Ս.**

ՎՐԱՍՏԱՆ

# «Օկուպացված տարածքներ» այցելելը «էժան» կնստի

**Հայաստանի շատ քաղաքացիներ, որոնց համար այս կամ այն պատճառներով անհրաժեշտություն է եղել այցելել Աբխազիա, այդուհետեւ Վրաստանում հայտնվում էին թակարդում՝ որպես «պետական սահմանը» խախտողներ: «Ազգը» քանիցս ներկայացրել է դեպքեր, երբ ՀՀ քաղաքացիները ձերբակալվել ու անգամ դատապարտվել են Վրաստանում այդ երկրի քրեական օրենսգրքի համապատասխան դրույթը խախտելու հետեւանքով:**

**Մինչ օրս վրացական օրենսդրությունը «օկուպացված տարածքներ» առանց Վրաստանի թույլտվության այցելելու համար հետագայում Վրաստանում հայտնվելու դեպքում նախատեսում է կամ մոտ 1200 ԱՄՆ դոլարի չափով տուգանք, կամ էլ ազատազրկում 2-4 տարի ժամկետով: Եվ քանի որ մասնավորապես հայաստանցիների պարագայում այդ «անօրինական» այցելությունները Աբխազիա լինում էին ընտանիքներով, ասել է թե խախտում ասվածն իրագործվում էր խմբակային, պատժաչափն էլ գրեթե բոլոր գործերով հասցվում էր առավելագույնի:**

**Վրաստանի խորհրդարան է ներկայացվել օրենսդրական փոփոխությունների մի փաթեթ, որի համաձայն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Աբխազիա կամ Հարավային Օսիա «անօրինական» այցելությունները կարժենան մոտ 250 ԱՄՆ դոլար տուգանք, իսկ կրկնվելու դեպքում կլինի ավելի խիստ պատիժ՝ քրեական պատասխանատվության հավանականությամբ:**

**Նման նախաձեռնությամբ հանդես է եկել Վրաստանի կառավարությունը՝ ի դեմս օրենսդրական փաթեթը ներկայացնող ռեինտեգրացիայի գծով պետնախարարի աշխատակազմի: Ըստ այդմ՝ փոփոխություններ են նախատեսվում Վրաստանի քրեական օրենսգրքում, վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում եւ «օկուպացված տարածքների մասին» օրենքում: Փոփոխությունների նպատակն, ըստ վրացական լրատվամիջոցների տարածած տեղեկության, Աբխազիա եւ Հարավային Օսիա այցելելու առնչությամբ առաջացող իրավական պատասխանատվության ազատականացումն է:**

**Օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է, որ այսուհետեւ վրացական կառավարությունը կարող է թույլտվություն տրամադրել «օկուպացված տարածքներ» այցելելու «չթույլատրվող ուղղություններից», տվյալ դեպքում նկատի ունենալով Ռուսաստանից այդ տարածքներ մուտք գործելու հնարավորությունը: Ընդ որում, վրացական կառավարությունը նման թույլտվություն կարող է տալ նայած իրավիճակի, ինչպես մինչեւ այցելությունը, այնպես էլ այցելության ընթացքում, այսինքն՝ այն դեպքում, երբ որեւէ երկրի քաղաքացի արդեն իսկ հայտնվել է Աբխազիայում կամ Հարավային Օսիայում:** **Վ. Պ.**

# Հեղափոխությունն ու լավ մարդը

**Րաֆֆիին ընտողների (եւ ոչ միայն ընտրողների) զգալի մասին եթե հարցնենք, թե ինչ եք մտածում «Ժառանգության» առաջնորդի մասին, ապա առաջինն ինչ ասեն՝ հետեւյալը կլինի՝ «լավ մարդ»: Թե ո՞րն է «լավ մարդու» դերը քաղաքականության մեջ, պետական ամենաբարձր պաշտոններում ու առհասարակ կարո՞ղ է արդյոք «լավ մարդը» զբաղեցնել այդ պաշտոններն ու մնալ «լավ մարդ», այլ խոսակցության թեմա է, սա հետաձգենք դեռ, այժմ թերեւս ավելի հրատապ այլ հարց կա. կարո՞ղ է արդյոք լավ մարդը հեղափոխություն անել, ի դեպ, Րաֆֆիի պահանջը Սերժ Սարգսյանից՝ հանձնել իշխանությունը Հայաստանի ժողովրդին, հենց ենթադրում է հեղափոխություն: Ինչն իր հերթին լինում է, որպես կանոն, արյունոտ, ցնցող, խարխլող, միեւնույն ժամանակ լինում է այսպես կոչված ժողովրդավարական, առանց լուրջ ցնցումների, չնայած անգամ այս պարագայում հեղափոխությունն առանց արյան չի լինում: Իսկ ինչպես գիտենք, «լավ մարդիկ» չեն կարող պատճառ հանդիսանալ, դրդել, ցանկանալ, մղել արյուն թափելու, ուրեմն... Բացի սրանից, Րաֆֆիի քաղաքական կերպարն ամենեւին էլ հեղափոխականի կերպար չէ, նա ուղղակի նման էություն չունի, իսկ հեղափոխականը հենց էություն է՝ առաջին հերթին: Րաֆֆին քաղաքական խաղաղ, հաշտ գործընթացների կողմնակիցն է, թերեւս այս համապատկերում կարելի է տեղավորել նաեւ երեկ Ազատության հրապարակից իր հետեւից երթի դուրս եկած քաղաքացիներին Րաֆֆու ասածը. «Ժողովուրդ, ես տուն եմ գնում, բա դո՛ւք ուր եք գնում...»: Րաֆֆին ամբոխավար է, բայց ոչ ամբոխասեր, նա հռետոր է, եւ միայն, ու եթե անգամ իրականում հավաքել է ութսուն տոկոս ձայն, միեւնույն է, նա ոչ թե չի ուզում այդ «ութսուն տոկոսին» տերը դառնալ իրենց ձայների, այլ պարզապես այդպիսին չէ, տպավորություն կա անգամ, որ Րաֆֆին ինքը գոնե առայժմ չի կարողանում հասկանալ, թե ի՞նչ անի իր ձայների հետ, մանավանդ՝ ուր ուղարկի, մանավանդ՝ երբ ինքն ընդամենը տուն է գնում...**

**Այս առումով մի շատ կարեւոր նրբություն էլ կա. որտեղի՞ց է գոյացել Րաֆֆու շուրջ քառասուն տոկոսը, երբ «Ժառանգությունը» նախորդ խորհրդարանական ընտրություններում, այն էլ «Ազատ դեմոկրատների» հետ միայն հինգ տոկոս հավաքեց: Պարզ է, որ ուրեմն Րաֆֆին ստացել է քաղաքական այլ ուժերի համակիրների զգալի հատվածի ձայները: Օրինակ, երեկ Ահարոն Ադիբեկյանը նշեց, որ, իր ուսումնասիրություններով, Րաֆֆի Հովհաննիսյանին ձայն են տվել ՀՀԿ-ին ձայն տված ընդհանուր ընտրողների 6 տոկոսը, ԲՀԿ-ի կողմնակիցների 36 տոկոսը, ՀԱԿ-ի 40 տոկոսը, ՀՅԴ-ի 38 տոկոսը, ՕԵԿ-ի 29 տոկոսը եւ վերջապես «Ժառանգության» 77 տոկոսը: Այսինքն, ինչպես տեսնում ենք, Րաֆֆուն ձայն է տվել ու զգալի ձայն է տվել ոչ միայն ու ոչ այնքան ընդդիմադիր կողմնորոշում ունեցող քաղաքացիների արմատական տրամադրված մասը, հետեւաբար հեղափոխություն անելու համար Րաֆֆին չունի դրա համար խիստ անհրաժեշտ ծայրահեղ ընդդիմադիր տրամադրված հոծ զանգված, ու ինքն էլ, ինչպես վերը նշեցինք, էությամբ հեղափոխական չէ:**

**Թերեւս մեր ժողովուրդն ինքը հեղափոխական չէ, համենայն դեպս, դատելով ընտրությունների արդյունքներից եւ հանրահավաքներին մասնակցության պասիվությունից: Դե քանի որ մենք հեղափոխական չենք, ուրեմն պարզապես «լավ ժողովուրդ ենք», ով, անխոս, արժանի է... ոչ հեղափոխական ժամանակների:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Դիտարկումներ

# Քուրդիստանը կազմավորման գործընթացում է. պատրա՞ստ ենք արդյոք

Քուրդ մի առաջնորդ վերջերս հրապարակայնորեն ընդունեց, որ իր նախնիները մասնակցել են Հայոց ցեղասպանության գործողություններին, եւ ներողություն խնդրեց դրա համար: Լուրն արծարծվեց հայկական լրատվամիջոցներում եւ արձագանք գտավ նաեւ օտարալեզու միջազգային մամուլում: Առաջին անգամը չէ, որ քուրդ քաղաքական մի գործիչ կամ կուսակցության ներկայացուցիչ նման հայտարարություն է անում: Դա բոլորովին չի նշանակում, որ ներողությունը հնչում է համայն քուրդ ժողովրդի կողմից կամ անունից, քանի որ քրդերը դեռեւս անկախության կարգավիճակ չեն ձեռք բերել եւ չեն կազմավորվել որպես պետություն, բայց բոլոր տվյալներն առկա են, որ նրանք այդ ուղու վրա են: Այնպես որ, հայտարարության ժամանակը առավել պատմական հնչեղություն է ստանում:

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Խնդրո առարկա անձնավորությունը քուրդ ազդեցիկ առաջնորդ է Ահմեդ Թյուրք անունով, թուրքական խորհրդարանի անդամ է եւ քրդամետ «Ժողովրդավարական հասարակություն» կոնգրեսի համանախագահը: Նա միաժամանակ բանակցող էմիսար է թուրք կառավարության եւ ցմահ բանտարկության դատապարտված քուրդ առաջնորդ Աբդուլլահ Օջալանի միջեւ:

Դերսիմի 1937-38 թվականների քրդական խռովություններից ի վեր իրարահաջորդ թուրքական վարչակազմերը չեն կարողացել քրդական դիմադրողականության մեջքը ջարդել: 1980-ի հեղաշրջմանը հաջորդած տարիներին 40 հազար մարդ է սպանվել քուրդ ապստամբների եւ թուրքական բանակի միջեւ ծագած բախումների ժամանակ: Կորուստների մեծ մասը քրդական կողմից են եղել: Սակայն թուրքերը չեն կարողացել ջինը շշի մեջ պարփակել նորից: Վկա՝ իրաքյան Քուրդիստանի վիրտուալ իրականությունը: Հենց գլխավոր թշնամու՝ PKK-ի առաջնորդի հետ բանակցելու թուրքերի ցանկությունը ցույց է տալիս, որ հոգնել են արդեն ազատագրական շարժումը ճնշելու իրենց փորձերից:

Եվրոմիությունը ճնշում է բանեցնում Թուրքիայի վրա՝ կարգավորելու քրդական հարցը նախքան ԵՄ անդամակցությունը:

Թվում է, թե Ահմեդ Թյուրքի հայտարարությունը քաղաքականապես նպատակահարմար է քուրդ-թուրքական հարաբերությունների այս փուլում, ուժեղացնելու համար քրդական պահանջները: Այդուհանդերձ, դա մի ժեստ է, որ ողջունելի պետք է լինի հայերիս համար:

Փետրվարի 4-ին արտասանած իր ելույթում Թյուրքը մասնավորապես ասաց. «Մեր պապերին եւ հայրերին օգտագործել են հայերի, ասորիների եւ եզդիների դեմ գործադրված անարդարությունների ժամանակ: Նրանց ձեռքերի վրա արյուն կա: Այդ ժողովուրդների արյամբ նրանք արյունոտեցին իրենց ձեռքերը: Այնպես որ, որպես նրանց զավակներն ու թոռները, մենք ներողություն ենք խնդրում: Թուրքական կառավարությունն էլ, փոխանակ ժխտելու, պարտավոր է ներողություն խնդրել... Այստեղ արմատական փոփոխության կարիք է զգացվում»:

Հայերը հազվադեպ են քրդերի հետ միասին պայքարել թուրքական լծից ազատագրվելու համար: Ընդհանուր առմամբ քրդերի մասնակցությունը ցեղասպանության գործընթացին գերիշխել է մեր հոգեբանության վրա եւ ըստ այդմ ձեւավորել մեր տեսակետը կամ քաղաքականությունը նրանց հանդեպ: Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակ առ ժամանակ հաղորդակցվել են քուրդ առաջնորդների հետ, բայց չենք կարող մատնանշել կայուն համագործակցություն ուղղված մեկ ընդհանուր թշնամու դեմ: Կարող ենք, սակայն, արձանագրել այն փաստը, որ ամբողջ խորհրդային ժամանակաշրջանում քրդական փոքրամասնությունը Հայաստանում վայելել է հավասար իրավունքներ եւ պահպանել իր էթնիկական ինքնությունը:

Իրաքում քրդական ինքնավարության կազմավորումը «դոմինոյի էֆեկտ» կամ շղթայական հակազդեցություն է ունենալու Թուրքիայում, որտեղ 16-22 միլիոն քրդեր են բնակվում, ըստ տարբեր վիճակագրական տվյալների: Հարեւան Սիրիայի մասնատման հետեւանքով քրդերն արդեն ինքնավարություն են հռչակել երկրի հյուսիսային մասում: Թուրքիան ճակատագրական խաղ է խաղում՝ վարձկաններին վերապատրաստելով եւ զենք մատակարարելով Սիրիայի ապստամբներին, դրանով իսկ փորձելով ճնշել քրդական անկախության շարժումը եւ դրա հետագա ներգործությունը Թուրքիայի վրա: Ամերիկյան հետախուզական խորհրդի տվյալներով՝ Թուրքիայի տարածքում Քուրդիստանի կազմավորումը հնարավոր կլինի մինչեւ 2030 թվականը: Իր «Համընդհանուր փոփոխությունների 6 շարժիչ ուժերը» (Six Drivers of Global Change) գրքում ԱՄՆ-ի նախկին փոխնախագահ Ալ Գորը կանխատեսում է, որ առաջիկա տասնամյակներում շատ նոր քաղաքական միավորներ կարող են ի հայտ գալ: Նա մասնավորապես նշում է. «Մեր ժամանակների աշխարհաքաղաքական գլխավոր ուղղությունը եղել է խաղաղ կամ բռնի միջոցներով բազմազգ պետությունները վերակազմավորել ավելի փոքր, միատարր պետություններով, ինչպես տեղի ունեցավ Ղազախստանում, Սլովենիայում, Հարավային Սուդանում: Այս ուղղությունը ազգայնականության վերազարթոնք է եւ ոչ թե թուլացում»:

Մենք կարող ենք այդ ցուցակին ավելացնել եվրոպական այն երկրները, որոնք պատրաստվում են մասնատվել. Իսպանիան, օրինակ, որտեղ Կատալոնիան է անկախության ուղին բռնել, Բելգիան, որտեղ ֆլամանդացիներն ու վալոնները իրար դեմ են պայքարում, եւ անշուշտ, նախկին Հարավսլավիային մաս կազմող ազգային պետությունները:

Բոլոր վերոհիշյալ պարագաների դեմքում պարադոքսայինն այն է, որ մինչ փոքրամասնությունները վերահաստատում են իրենք իրենց առանձին պետություններում, նրանք, այնուամենայնիվ, ավելի հանգիստ են զգում իրենց համեմատաբար առավել մեծ քաղաքական կառույցներում, ինչպիսին է, օրինակ, Եվրոմիությունը:

Եվ քանի որ Թուրքիան էլ ցանկանում է անդամակցել Եվրոմիությանը, նրան հավանաբար կհամոզեն հետեւել վերոնշյալ ուղղությանը եւ ընդունել անկախ Քուրդիստանի գոյառումը երկրում:

Սեւրի 1920 թվականի օգոստոսի 10-ի պայմանագիրը, ստորագրված հաղթանակած դաշնակից պետությունների եւ պարտված օսմանյան կառավարության միջեւ, հայերին էր տալիս 60 հազար քառ. մղոն մի տարածք (կամ 160 հազար քառ. կմ), որը 6 անգամն է ներկայիս Հայաստանի Հանրապետության: Նույն պայմանագիրը նաեւ նախատեսում էր Քուրդիստանի ստեղծումը, որի սահմանները պետք է հետագայում որոշվեին հանրաքվեի միջոցով: Քուրդիստանը ներկայումս զբաղեցնում է 190 հազար քառ. կմ տարածք: Նույնիսկ այդ ժամանակ տարակարծություններ կային քուրդ եւ հայ պատվիրակությունների միջեւ, որովհետեւ քրդերը ցանկանում էին Վանն էլ ընդգրկել Քուրդիստանի տարածքում: Հետագայում Վանն ու Ալեքսանդրետի նավահանգիստը (ներկայումս Հաթայի նահանգ) հատկացվեցին քրդերին, որոնք դրա փոխարեն հրաժարվեցին Էրզրումի եւ Սասունի, բայց ոչ Արարատի եւ Մուշի իրենց պահանջներից:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը չեղյալ համարեց Սեւրի պայմանագիրը եւ այն փոխարինեց Լոզանի պայմանագրով (1923), վերջ դնելով նաեւ էթնիկական այլ խմբավորումների տարածքային պահանջներին:




Այժմ, երբ քրդերն են ապրում պատմական Հայաստանի տարածքի որոշ մասի վրա, նրանք, կարելի է ասել, 90 տոկոսով լուծել են իրենց խնդիրը, ակադեմիականի վերածելով Սեւրի պայմանագրի ստորագրման ժամանակ ստեղծված բանավեճը:

Քուրդիստանի անկախության հռչակումից հետո Ահմեդ Թյուրքը շարունակելո՞ւ է ներողություն խնդրել եւ այդ ներողությունը արդյոք հաշվի՞ է առնելու հայերի պահանջատիրության խնդիրը:

Ներկա հայ-թուրքական սահմանը հաստատվել է Մոսկվայի եւ Անկարայի միջեւ 1921-ին ստորագրված Կարսի պայմանագրի համաձայն: Թուրքիայի ջանքերը՝ ստիպելու Հայաստանի Հանրապետությանը, որ ընդունի այդ պայմանագրի դրույթները, ցարդ հաջողությամբ չեն պսակվել:

Հարցն այժմ այն է, թե արդյոք այդ պայմանագրի դրույթները ուժի մե՞ջ են մնալու Հայաստանի սահմանին Քուրդիստանի՝ որպես անկախ պետության հաստատումից հետո, հաշվի առնելով, որ Քուրդիստանը այդ պայմանագրի ստորագրողներից մեկը չէ: Ոչ էլ Հայաստանը, որին միայն պարտադրվել է ընդունել պայմանները: Հայաստանն արդյոք մշակե՞լ է քրդական անկախությունը պաշտպանելու եւ այդ երկիրը որպես նոր հարեւան ընդունելու համապատասխան քաղաքականություն:

Սփյուռքը կարող էր պաշտպանել քրդերի անկախության պայքարը, բայց շատ բան չի արել, որովհետեւ վերջին հիսուն տարիների ընթացքում զբաղված էր իր վերքերը բուժելով եւ ոչ մի կերպ չէր կարող ազգային քաղաքականություն մշակել: Ակնհայտ է, որ Քուրդիստանի գոյառումը՝ որպես նոր հարեւանի, նոր պայմաններ է ստեղծելու մեզ համար: Պատրա՞ստ ենք արդյոք դրան:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ.՝ Հ. Ծ.

---

ԽԱՌՆԱԿ ՕՐԵՐ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

## Դուք մանուկ եղած չէ՞ք

Շանթ Պողիկեանը չորս տարեկան է: Այս տարի կոկոն դասարան պիտի ըլլար: Ինչ լաւ պիտի ըլլար, զբօսանքին իր ընկերներուն հետ պիտի խաղար, դպրոցի բակին մէջ պիտի վազվզէր, գնդակ պիտի խաղար: Իսկ դասարանին մէջ ի՜նչ խաղալիքներ կային՝ ձի, թռչուն, սահնակ, ինչե՜ր, ինչե՜ր: Ուսուցչուհին զինք պիտի սիրէր, շաքար պիտի տար:

Բայց այս տարի ինքն ալ չհասկցաւ թէ ինչո՞ւ այս բոլորը չեղան, ինչո՞ւ իր դպրոցմանկապարտէզը ըսին թէ արգիլեալ շրջան է, վտանգաւոր շրջան է եւ ինք զրկուած է դպրոցի բարիքներէն:

Այս լաբծներուն մէջ իրեն անծանօթ շատ բառեր կային:

Ահա՛ իրենց ընտանիքը բոլորուած հեռատեսիլի շուրջ: Մեծերը՝ մեծ հայրիկը, հայրիկը, մայրիկը կը դիտեն հեռատեսիլի նկարները ու մտիկ կ՚ընեն անկէ բարձրացած խօսքերը: Այդ բոլորը զինք չեն հետաքրքրեր: Ինչ լաւ է որ Շանթ եղբայր մը ունի՝ Արամը, ան իրմէ մեծ է, միշտ կ՚օգնէ իրեն, պատմութիւններ կը պատմէ: Լաւ կ՚ըլլար որ քոյրիկ մըն ալ ունենար, որպէսզի քիչ մըն ալ քոյրիկին հետ խաղար: Ինք արդէն օր մը մօրմէն քոյրիկ մը ուզեց, բայց քոյրիկը չկար ու չկար:

Դպրոցը աւելի լաւ էր, իրենց մանկապարտէզը: Հոն երգել կար, խաղալ կար, իրարու ետեւէ վազել կար: Ինչո՞ւ հիմա այդ բոլորը չկային: Չորս տարեկան երախան ի՞նչ հասկնար:

Ահա պապան եւ մաման հեռատեսիլին առջեւ են: Հոն է նաեւ եղբայրը: Թաց աչքերով նկարներ կը դիտեն: Այո՛, այո՛, թաց աչքերով այդ նկարին մէջ մարդ մը վիրաւոր երախայ մը շալկած արագ-արագ կը քալէ: Ահա մայրիկին ու հայրիկին աչքերը թրջուեցան, ըսին պատերազմ է, հայր մը իր վիրաւորուած երախան կը տանի հիւանդանոց: Շանթ եղածէն բան մը չհասկցաւ, բայց երբ արցունք տեսաւ մեծ հայրիկին ալ աչքերուն մէջ, անսովոր լաց մը բարձրացաւ իրմէ: Շանթ կու լար: Հասկցած էր պատերազմ բառին իմաստը ու միջոց մը լալէ ետք սրբեց իր աչքերուն արցունքները եւ թուղթէ զէնքի մը պատրաստութեան անցաւ:

- Ի՞նչ պիտի ընես այդ զէնքը,-հարցուց հայրիկը:

- Պզտիկը վիրաւորողին պիտի զարնեմ,-պատասխանեց Շանթ:

Իսկ Արամը անդիէն նետուելով գոչեց.- Եղբայր, քու զէնքդ թուղթէ է, ես երկաթէ զէնք ունիմ, եկուր միասին զարնենք այդ մարդը, այդ փիս մարդը...

Պատերազմը ինչեր կը սորվեցնէ երախաներուն, ինչե՜ր...

Պատերազմը ինչերէ՜ կը զրկէ երախաները... ո՞ւր է անոնց աշխուժութիւնը, անոնց երգելն ու պարելը...

Զբօսանքի պահուն մանկապարտէզի երախաներուն աղմուկ-աղաղակը, պոռչտուքներն ու վազվզուքները արդէօք համանուագ մը չէ՞ն մեզի համար: Աննման համանուագ մը, որ նորագոյն սերունդին յատուկ է:

Դիպուկահարներ, ռմբաձիգներ, պատերազմ հրահրողներ, դուք ի՞նչ իրաւունք ունիք փոքրիկներուն խաղերը արգիլելու, անոնց պատերազմ սորվեցնելու ի՞նչ իրաւունք ունիք:

Անոնք ո՛ր ազգին ալ պատկանին, մեր վաղն են, մեր ապագան, ինչո՞ւ անոնց խաղաղ աճը կը փճացնէք, ինչո՞ւ:

Չէ՞ որ անոնք վաղը սերմնացաններ պիտի ըլլան, միտքի սերմնացաններ, եղբայրութեան սերմնացաններ:

Դուք մանուկ եղած չէ՞ք: Մէկը խանգարա՞ծ է ձեր մանկութիւնը: Հապա դուք ինչո՞ւ կը խանգարէք մեր մանուկներուն մանկութիւնը, ու թոյլ կու տաք, որ Շանթը իր աղիողորմ լացը բարձրացնէ ձեր խուլի ականջներուն դէմ:

Վաղը, ոչ հեռու օր մը, բոլոր շանթերը, դուք եթէ շանթարգել ալ ունենաք, անիծելով պիտի շանթահարեն ձեզ, ձեզմէ հաշիւ պիտի պահանջեն, եթէ շուտով անցեալ չդառնաք:

Վախցէ՛ք մեր մանուկներուն վաղուան անէծքէն, որ կրնայ շանթահարել ձեզ:

Շանթ եւ այսօրուան բոլոր շանթերը վաղը պիտի չներեն ձեզի, ձեզի, իրենց մանկութիւնը բզկտողներուդ...

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հալէպ

# «Հետընտրական ճգնաժամ Հայաստանում»

## *Թուրքական լրատվամիջոցների ցանկությունը հայասյացության երանգ է պարունակում*

ՀՀ նախագահական ընտրությունների նկատմամբ չունենալով նախորդ անգամվա շահագրգռությունը, թուրքական զանգվածային լրատվամիջոցները այնուամենայնիվ անտարբեր չէին: Նրանք ընտրություններին մոտենում էին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների տեսանկյունից, պայմանավորելով դրանց բարելավումը Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Ղարաբաղյան հիմնահարցում հայկական կողմի զիջումներով:

Քանի որ գործող նախագահ Սերժ Սարգսյանն արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ բազմիցս վերահաստատել է Հայաստանի դիրքորոշումն այս հիմնահարցերում, ուստի նախնական արդյունքների հրապարակումից հետո կտրուկ նվազեց թուրքական լրատվամիջոցների հետաքրքրությունը ընտրությունների նկատմամբ: Այդ իսկ պատճառով էլ դրանք փետրվարի 19-ին բավարարվեցին զուտ արդյունքների պարզունակ շարադրմամբ, ընդ որում՝ համարելով Սերժ Սարգսյանի հաղթանակը տրամաբանական, թե դա արդեն կանխատեսելի էր: Նույնիսկ որոշ կայքէջեր նախորդ օրը գրեցին, որ հաղթանակի առթիվ Րաֆֆի Հովհաննիսյանը շնորհավորեց Սերժ Սարգսյանին:



Սակայն փետրվարի 19-ի երեկոյան «Ժառանգություն» կուսակցության առաջնորդի՝ Ազատության հրապարակում կազմակերպած ասուլիսը, առավել եւս բավականաչափ սուր հայտարարությունները խիստ գայթակղեցին թուրքական լրատվամիջոցներին: Այն թերթերը, որոնք գրեթե անուշադրության էին մատնել Հայաստանի նախագահական ընտրությունները՝ արդյունքներով հանդերձ, պրն Հովհաննիսյանի հայտարարություններին անդրադարձան հենց առաջին էջում:

Տվյալ դեպքում դրանց խնդիրը ոչ թե ընտրությունների արդյունքների ամփոփումն է, որքան վիճարկումն ու Հայաստանի ներքաղաքական լարվածության սրումը՝ կապված վիճարկումների հետ: Թերեւս թուրքական լրատվամիջոցներից պետք է առանձնացնել «Դունյա բուլթենի» գործակալությունը, որը երեկ Րաֆֆի Հովհաննիսյանի Ազատության հրապարակում արած հայտարարություններին անդրադարձավ «Պարտվելն ու վերջնաժամկետ ներկայացնելը մեկ եղավ» վերնագրով:

Ի դեպ, «Դունյա բուլթենին» իսլամամետ է եւ հարում է վարչապետ Էրդողանի կառավարությանը: Երեկ կայքէջում այս գործակալությունը նշել է, որ Հայաստանում ընտրություններից հետո թափ է ստանում արդյունքների վիճարկումը, ապա հակիրճ ներկայացրել ինչպես Րաֆֆի Հովհաննիսյանի հայտարարությունները, այնպես էլ Սերժ Սարգսյանի շնորհակալական խոսքը նախընտրական շտաբի անդամներին եւ ընտրողներին:

Հենվելով «Անատոլու» գործակալության հաղորդագրության վրա՝ թուրքական NTV կայքէջը Րաֆֆի Հովհաննիսյանի նախորդ օրվա հայտարարություններին անդրադարձավ բավական հանգամանալի: Թեեւ այս լրատվամիջոցը նախագահ Սարգսյանի շնորհակալական խոսքը ներկայացրել է մի քանի նախադասությամբ, բայց եւ այնպես մատնանշել է. «Մինչ Հայաստանում վիճարկում էին ընտրությունների արդյունքները, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսով շնորհավորել է Սարգսյանին: Հեռախոսազրույցի ընթացքում Պուտինը Սարգսյանին ասել է, որ ինքը վստահ է ռուս-հայկական հարաբերությունների ապագայի առումով»:

Այս ամենը լուսաբանել է նաեւ հեռավոր Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը «Հետընտրական ճգնաժամ Հայաստանում» վերնագրով: Այս կայքէջի վերնագիրն արտահայտում է Թուրքիայի քաղաքական շրջանակների ցանկությունը: Իսկ ենթավերնագիրը՝ «Իշխանությունը բռնի տիրոջը հանձնելու համար 24 ժամ ունի», հայասյացության յուրատեսակ դրսեւորում է՝ պայմանավորված ՀՀ գործող նախագահի անձով:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

# Քրդերի եւ ապստամբների զինադադար Սիրիայի հյուսիսում



Սիրիայի հյուսիսում՝ Թուրքիայի սահմանից 5 կմ հեռավորության վրա գտնվող Ռաս էլ Այն քաղաքում քուրդ աշխարհազորայինները եւ այսպես կոչված «Սիրիայի ազատ բանակի» ապստամբները փոխադարձ համաձայնությամբ դադարեցրել են կրակը:

Կողմերի զինված հակամարտությունը չէր դադարում 2012 թվականի նոյեմբերից: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ գրոհայինների եւ քրդերի միջեւ զինադադարի հաստատմանը նպաստել է իբրեւ միջնորդ հանդես եկած սիրիացի ընդդիմադիր գործիչ Միշել Քիլոն: Համաձայնագրով նախատեսվում է, որ «Սիրիայի ազատ բանակի» ծայրահեղական անդամները կդադարեցնեն Ռաս էլ Այնի շրջափակումը, իսկ քրդերը նրանց թույլ կտան առանց զենքի ազատորեն տեղաշարժվել քաղաքում եւ անցնել իրենց պահակակետերով: Երկու կողմերն առանց սահմանափակման կօգտվեն Թուրքիայի սահմանային անցակետից: Ընթացիկ հարցերի լուծման նպատակով ստեղծվում է համատեղ կազմկոմիտե:

«Քրդական ազգային նախաձեռնություն» կազմակերպության ղեկավար Օմար Օուսին վստահ չէ, թե զինադադարը երկար կտեւի: Նրա խոսքերով, զինված բախումների պատճառը Թուրքիայի միջամտությունն է սիրիական ճգնաժամին: Բնակչությունը Թուրքիայից եկած օտարականներին մեղավոր է համարում արյունահեղության համար:

Քրդերի ինքնապաշտպանական ուժերի հիմքը կազմում են «Քրդական ժողովրդավարական միության» մարտիկները, որը ինչպես ենթադրվում է, սերտորեն կապված է Թուրքիայում արգելված PKK-ի հետ:

# Հակաամերիկյան կիբեռգրոհների աղբյուրը գտել են ՉԺՀ բանակում



Ամերիկյան եւ կանադական ընկերությունների ու կազմակերպությունների դեմ ուղղված կիբեռնետիկական գրոհների «գերակշիռ մասը» իրականացվել է Շանհայի արվարձանում գտնվող միեւնույն շրջանից: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը՝ վկայակոչելով տեղեկատվական անվտանգության ոլորտում գործող ամերիկյան Mandiant ընկերության հետազոտությունը:

Փորձագետներին հաջողվել է բացահայտել ամենահմուտ ցանցահենային խմբավորումներից մեկի անդամներին, որը հայտնի է «Շանհայի խումբ» անունով: Mandiant-ի տվյալներով՝ տվյալ խմբավորման գրոհները կազմակերպվում են հենց այն շրջանում, որտեղ գտնվում է ՉԺՀ բանակի թիվ 61398 բաժնի կենտրոնակայանը:

Մասնագետներն ընդգծում են, որ ցանցահենները թերեւս գործել են այդ նույն շենքում, քանի որ իրենք չեն տեսնում կիբեռգրոհների մեկ ուրիշ ճշմարտանման բացատրություն: «Կամ դրանք ծագում են թիվ 61398 բաժնից, կամ էլ աշխարհում լավագույնս վերահսկվող ինտերնետային ցանցերի աշխատանքն ապահովող մարդիկ չեն նկատում իրենց կողքին կիբեռգրոհներ կազմակերպող անձանց», հայտարարել է Mandiant-ի հիմնադիր եւ ղեկավար Քեւին Մենդիան:

Mandiant-ի հետազոտության մեջ նշվում է, որ ցանցահենների զոհերն են դարձել ամերիկյան առնվազն 141 զանազան կազմակերպություններ: Այդ գրոհների ընթացքում տարբեր կազմակերպությունների (Coca-Cola-ից մինչեւ նավթային ընկերություններ) համակարգիչներից կորզվել են մի քանի հարյուր թերաբայթ ծավալով տեղեկություններ: Ըստ որում, խոսքը լոկ այն գրոհների մասին է, որոնք հաջողվել է հեշտությամբ բացահայտել:

Հետազոտության պատվիրատու «Նյու Յորք թայմսը» մեջբերում է նաեւ ուրիշ հետազոտական ընկերությունների տվյալներ, որոնց համաձայն Չինաստանի ցանցահենային խմբերից շատերը կապված են երկրի իշխանությունների, մասնավորապես թիվ 61398 բաժնի հետ: Թերթը նշում է, որ այդ բաժինը գրեթե չի հիշատակվում չինական բանակի պաշտոնական հաշվետվություններում: Այդուհանդերձ դեռ 2011 թվականին ամերիկյան The Project 2049 Institute ոչ պետական հետազոտական կազմակերպությունը թիվ 61398 բաժինն անվանել էր «ԱՄՆ-ի եւ Կանադայի դեմ քաղաքական, տնտեսական ու ռազմական հետազոտությամբ զբաղվող գլխավոր ստորաբաժանում»:

2013 թ. հունվարի վերջերին «Նյու Յորք թայմսը» գրեց, որ խմբագրությունը եւ աշխատակիցները մի քանի ամիս շարունակ ՉԺՀ ցանցահենների գրոհների թիրախներն են եղել: Չարագործները հավանաբար փորձել են պարզել այն տեղեկատվության աղբյուրը, որը հիմք էր դարձել ՉԺՀ վարչապետ Վեն Ցզյաբաոյի ընտանիքի եկամուտներին առնչվող մի շարք հրապարակումների համար:

# Ռազմական «թռչուններ» եւ «բզեզներ» ԱՄՆ-ում



Ամերիկյան ռազմական անօդաչու ինքնաթիռներ մշակող կազմակերպությունները ստեղծել են դրանց նորագույն եւ փոքրածավալ տարատեսակները, որոնք «աննկատելի, ամենագո եւ մահաբեր» են: Այդ թռչող սարքերը արտաքուստ հիշեցնում են թռչուններ ու բզեզներ եւ ըստ այդմ կթռչեն, կմագլցեն, օդում կկախվեն, կնստեն հաղորդալարերի վրա, կթափանցեն կացարաններ եւ «կխայթեն»:

Ամերիկացի զինվորականները «միկրոթռչնանոցի» հնարավորությունները տեսահոլովակի միջոցով ցուցադրել են The National Geographic հանդեսի լրագրող Ջոն Հորգանին: Վերջինս պատմում է, որ անօդաչու ինքնաթիռների մշակումը բուռն զարգացում ապրեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո: Չնայած որոշակի հաջողություններին՝ գյուտարարները հասկանում էին, որ ապագա անօդաչու ինքնաթիռները չպետք է շատ աչքի ընկնեն շրջակա միջավայրում: Ուստի որոշվեց նախագծել բզեզների ու թռչունների տեսք ունեցող սարքեր:

Զինվորականներն արդեն ունեն նման սարքի մոդելը, որը ներկայումս փորձարկումների է ենթարկվում: Ջոն Հորգանին չեն թույլատրել հետեւել փորձնական թռիչքներին, սակայն ցուցադրված տեսահոլովակի հեղինակները նկարագրել են «թռչունների» եւ «բզեզների» գործողությունների բնույթը: «Դրանք թռչում են փողոցների վրայով, սողում լուսամուտագոգերի վրա, նստում էլեկտրահաղորդման գծերի վրա: Թռչող սարքերից մեկն աննկատելիորեն մոտենում է հրացանավոր խոժոռ տղամարդուն եւ կրակում նրա գլխին», ըստ տեսահոլովակի պատմում է Ջոն Հորգանը:

Փ. Ք.

# Մշակույթ

ԼՈՒՐԵՐ

## Մերձավորարեւելյան արվեստի հարուստ ցուցադրություն Դուբայում

«Գեյթ ավանի ժողովրդականություն վայելող արվեստի գիշերներ» շարքի առաջին ցուցահանդեսը բացվել է հունվարի 13-ին Դուբայի օթերային պատկերասրահում, որտեղ ներկայացվել են տարածաշրջանի արդի եւ ժամանակակից տաղանդավոր արվեստագետներ Նասրոլլահ Աֆժեհեյի, Յուսուֆ Ահմեդի, Ռեզա Դերակշանիի, Մոհամմեդ Էհսայի, Պոլ Կիրակոսյանի, Սաբիհան Ադամի եւ Պարվիզ Տանավոլիի ստեղծագործությունները:

Տեսողական արվեստի իրանցի ժամանակակից ներկայացուցիչ Նասրոլլահ Աֆժեհեյը ծնվել է 1933-ին: Աճուրդներում նրա նկարներից շատ են վաճառվել: Վերջերս (2011-ին) Դուբայի «Քրիսթիզ» աճուրդային կենտրոնում նրա «Ալիֆ» կտավը վաճառվել է 218.500 դոլարով:

Յուսուֆ Ահմեդը պլաստիկ արվեստի լավագույն ներկայացուցիչներից է: Քաթարցի վարպետը տարածաշրջանի ավանդական գեղագրությունը ձեւավորում է նորովի օգտագործելով արդիական տեխնոլոգիաները: Ռեզա Դերակշանիի կտավները տարբեր երանգներ են ստանում լուսային տարբեր արտացոլումների ներքո:

Մոհամմեդ Էհսային ծնվել է 1939-ին Իրանում: Օտար մշակույթների փորձառություն է ձեռք բերել շատ ճանապարհորդելով: Նա այդ փորձառությունը օգտագործել է իր կտավներում:

Պոլ Կիրակոսյանը լիբանանահայ է, հիմնականում ապրել է Բեյրութում: Ծնվել է 1926-ին եւ վախճանվել է 1993-ին: Սովորել է Ֆլորենսում եւ շատ է ճանապարհորդել՝ ցուցադրելու համար իր կտավները, որոնք մարդկային իրավիճակների բարդություններն են արտահայտում:

Սաբիհան Ադամը գերադասում է փոխաբերական նկարչության ոճը: Նրա կտավներից շատերը մարդկության մութ կողմերն են ներկայացնում: Իսկ Պարվիզ Տանավոլին համարվում է Իրանի առաջադեմ արդի քանդակագործներից մեկը: Բրոնզից, կերամիկայից եւ մետաղի ու ապակու ջարդոններից պատրաստված նրա քանդակները խոր առնչություններ ունեն պարսկական ավանդական բանահյուսության հետ:

Ըստ լուրը հաղորդող «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի՝ ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացրել արվեստասերների շրջանում:

Հ. Ծ.

## Հայկական արվեստը «Սոթբիի» ցուցահանդեսում

Մարտի 4-12-ը «Ճանապարհների խաչմերուկում» խորագրով ցուցահանդես է բացվելու «Սոթբիի» (Լոնդոն) Նյու Բոնդ Սթրիթ հասցեում գտնվող շենքի դահլիճներում, որտեղ ցուցադրվելու է Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի ժամանակակից արվեստը: Այս մասին տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 19-ի համարը: Ներկայացվելու են Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի արվեստագետների մոտ 50 ստեղծագործություններ: Ուշադրության կենտրոնում են լինելու հիմնականում դիսիդենտ եւ սոցիալիստական ռեալիզմի ներկայացուցիչների գործերը՝ սկսած անցյալ դարի 60-ական թվականներից մինչեւ մեր օրերը:

«Կովկասյան եւ Կենտրոնական Ասիայի երկրները արագ տեմպերով առաջ են գնում: Տարածաշրջանը չափազանց հետաքրքրական է եւ հարուստ պատմություն ու մշակույթ ունի: Այնտեղ կան աչքի ընկնող, յուրահատուկ արվեստագետներ», նշել է այս առթիվ «Սոթբիի» ռուսական արվեստի բաժնի վարիչ Ջո Վիկերին:

Հ. Ծ.

## «Հակոբ Մեղապարտ» մեդալ՝ «Զանգակ-97» հրատարակչության տնօրեն Սոկրատ Մկրտչյանին

Հայ գրատպության 500-ամյակի միջոցառումների շրջանակում Վենետիկի Մխիթարյան միաբանությունում նախարարության հետ համատեղ վերջերս կազմակերպված գիտաժողովի եւ հնագույն տպագրական սարքերի ցուցահանդեսի ժամանակ որոշվել էր ստեղծել Մխիթարյան միաբանության եւ ՀՀ սփյուռքի նախարարության «Հակոբ Մեղապարտ» մեդալը, որը շնորհվելու է հայ գրատպության, գրահրատարակչական գործունեության բնագավառում մեծ ավանդ ունեցող անհատներին:

Հայ գրահրատարակչության զարգացման, գիտակրթական գործունեության, դասագրքերի ստեղծման գործում մեծ ավանդի համար ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը «Հակոբ Մեղապարտ» մեդալով է պարգեւատրել «Տաթեւ գիտակրթական համալիրի» տնօրեն, «Զանգակ-97» հրատարակչության տնօրեն Սոկրատ Մկրտչյանին:

## Պատանի պարողների եվրոտեսիլ

Այս տարի Հայաստանն առաջին անգամ կմասնակցի «Պատանի պարողների եվրոտեսիլին», որը տեղի կունենա Լեհաստանի Գդանսկ քաղաքում հունիսի 14-ին:

«**Ազգը**» զրուցեց Եվրոտեսիլի պատվիրակության նախագահ Գոհար Գասպարյանի հետ, որը տեղեկացրեց մրցույթի մանրամասները: «Պատանի պարողների Եվրոտեսիլ 2013-ի» հայաստանյան նախընտրական փուլին մասնակցում էին 16-21 տարեկան 20 պարողներ՝ ներկայացնելով 1:30 րոպե տեւողությամբ մենապարեր», ասաց նա եւ տեղեկացրեց, որ հավասարիմ մնալով միջազգային մրցույթի կանոններին (պատանի պարողը պետք է տիրապետի դասական բալետի հիմնական հմտություններին) խստապահանջ ժյուրիի կազմը մասնակիցներին գնահատեց 1-10 միավորով, 2 կարգով՝ տեխնիկա եւ գեղարվեստական արտահայտման որակ: Լավագույն տասնյակն ընտրվեց միավորների առավելությամբ: Անակնկալ կերպով հնարավորություն տրվեց նաեւ 11-րդ մասնակցին ընդգրկվել եզրափակիչ. վերջինս ընդամենը 1 միավորի տարբերությամբ էր հետ մնում տասնյակից:



Եզրափակիչ անցած մասնակիցներն են Վահագն Մարգարյանը, Քրիստինա Հարությունյանը, Մարիամ Գարաջյանը, Թագուհի Մարկոսյանը, Միլիտոն Կիրակոսյանը, Նարե Սուֆիասյանը, Մարիամ Հովհաննիսյանը, Անուշ Մանուկյանը, Արտյոմ Ղարիբյանը, Ռաֆել Երանոսյանը, Անի Վարդանյանը:

Պրոֆեսիոնալ ժյուրիի անդամներն էին ՀՀ ժողովրդական արտիստ Վիլեն Գալստյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Դիվանյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Մարիկյանը, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենապարող Ռուբեն Մուրադյանը եւ հայկական պարի մենապարուհի Լիանա Հակոբյանը:

Այսպիսով 11 պարող կպայքարեն Պատանի պարողների հայաստանյան եզրափակիչ փուլում, որը տեղի կունենա փետրվարի 23-ին, Առաջին ալիքի ուղիղ եթերում:

Բացի մենապարերից, մասնակիցները հանդես կգան նաեւ յուրահատուկ խմբակային պարով (բեմադրող՝ Արինա Արարատյան), որտեղ կցուցադրեն նաեւ զույգով եւ խմբով պարելու հմտությունները:

Եզրափակիչն իր ներկայությամբ կպատվի «Պատանի պարողների Եվրոտեսիլ 2013-ի», «Մանկական Եվրոտեսիլ 2013-ի» եւ «Պատանի երաժիշտների Եվրոտեսիլի» ղեկավար Վլադիսլավ Յակովլեւը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## «Հայակ» ազգային կինոյի երկրորդ մրցանակաբաշխություն

Ապրիլի 13-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Հայակ» ազգային կինոյի երկրորդ մրցանակաբաշխությունը:



Այն միտված է խթանելու եւ զարգացնելու ազգային կինոարտադրությանը, նոր անունների բացահայտմանը, երկրի կինոգործիչների համախմբմանը, կինոարտադրության նոր նախագծերին օժանդակելուն, ազգային կինոարտադրության լավագույն ավանդույթները պահպանելուն:

«**Ազգը**» զրուցեց Ազգային կինոկենտրոնի տնօրեն **Գեւորգ Գեւորգյանի** հետ, որը տեղեկացրեց. «Այս տարի «Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխությանը կկարողանան մասնակցել 2011թ. արտադրված այն ֆիլմերը, որոնք չեն ներկայացվել նախորդ մրցույթին, եւ 2012թ. արտադրված բոլոր ֆիլմերը՝ առանց ժանրային սահմանափակումների: Հայ կինոմատոգրաֆներից բացի, մրցանակաբաշխությանը կկարողանան մասնակցել օտարազգի ռեժիսորները, որոնք հայկական թեմայով ֆիլմեր են նկարահանել», եւ ավելացրեց, որ բավականին հայտեր են ստացել այս տարի, ի դեպ 6 ֆիլմի հայտ էլ ստացել են արտասահմանից՝ Իտալիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից եւ այլն:

Հիշեցնենք, որ 2012թ. առաջին մրցանակաբաշխությանը մասնակցել են անկախության ժամանակահատվածում (20 տարվա արտադրանքը) ստեղծված ֆիլմերը՝ 1991-2011թթ:

«Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխությունում որոշակի փոփոխություններ են կատարել՝ 2013 թ. կինոմրցույթը կունենա 15 անվանակարգ՝ 12-ի փոխարեն. լավագույն գեղարվեստական ֆիլմ, լավագույն ռեժիսոր, լավագույն օպերատոր, լավագույն սցենարի հեղինակ, լավագույն նկարիչ, լավագույն կոմպոզիտոր, լավագույն դերասան-դերասանուհի, լավագույն կարճամետրաժ ֆիլմ, լավագույն վավերագրական ֆիլմ, լավագույն անիմացիոն ֆիլմ, լավագույն դեբյուտ, կավելանան երկրորդական դերի լավագույն դերասան, երկրորդական դերի լավագույն դերասանուհի, լավագույն արտասահմանյան ֆիլմ (սփյուռքահայ ռեժիսորի կողմից նկարված կամ հայկական թեմայով օտարազգի ռեժիսորի աշխատանք):

Ընդգծենք, որ լավագույն արտասահմանյան ֆիլմ անվանակարգում կարող են ներկայացվել միայն 2012 թ. արտերկրում արտադրված ֆիլմերը: Բացի հիմնական անվանակարգերից, կշնորհվեն նաեւ հատուկ մրցանակներ՝ հայկական կինոյի զարգացման գործում ունեցած վաստակի համար:

Գ. Գեւորգյանը տեղեկացրեց նաեւ, որ «Հայակ» մրցանակաբաշխությանն այս տարի ներկա կգտնվեն Կարեն Շահնազարովը, Ներսես Հովհաննիսյանը, Արթուր Փելեշյանը եւ այլք. «Ցանկանում ենք նաեւ հրավիրել Ալեն Թերզյանին, Օմար Շերիֆին, Ռիշար Բերիին, տեսնենք ինչպես կստացվի»:

Ժյուրիի կազմը բաղկացած կլինի 11-13 անդամից՝ ներառյալ նախագահը: Կանոնակարգի համաձայն՝ եթե ժյուրիի որեւէ անդամ մասնակցություն է ունեցել մրցույթին ներկայացված ֆիլմերից որեւէ մեկի ստեղծմանը, ապա իրավունք չունի քվեարկելու տվյալ անվանակարգի համար:

Նշենք, որ մրցանակաբաշխության մրցանակի պատկերը՝ երկու ձեռքերի միացությունը երկար ժամանակ կինոաշխարհում օգտագործվել է որպես միջոց՝ պատկեր փնտրելու համար: Այն ռուսերենում կոչվում է «**Визир**», իսկ հայերենում՝ «Հայակ»: Մրցանակի հեղինակը Իզաբելլա Ներսիսյանն է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Թատերական ONLINE մրցանակաբաշխություն

Արդեն երկրորդ տարին «Tatron.info» կայքը ձեռնամուխ է լինում Tatron.info Online մրցանակաբաշխության կազմակերպմանը, որը տեղի կունենա մարտի 20-ին:




«**Ազգը**» զրուցեց Tatron.info Online մրցանակաբաշխության հիմնադիր նախագահ **Ֆրունզե Գեւորգյանի** հետ. «Այս նախագիծը նպատակ ունի ստանալ արդի թատրոնի իրական պատկերը հանդիսատեսի օնլայն քվեարկության արդյունքում: Կայքն իր առջեւ նպատակ է դնում ուսումնասիրել թատրոնների կողմից ժամանակակից հաղորդակցային միջոցների օգտագործումը, առանձնացնել համացանցի հնարավորություններից առավել ակտիվ օգտվող թատրոններին, դերասաններին, ռեժիսորներին եւ այլն»:

Օնլայն մրցանակաբաշխության անվանակարգերը կազմվում են «Tatron.info» կայքի անձնակազմի կողմից, իսկ անվանակարգի մասնակիցներն ընտրվում են օնլայն դաշտում (առցանց մամուլ, առցանց ռադիո եւ հեռուստատեսություն, սոցցանցեր, Google-ի որոնողական համակարգ եւ համացանցային այլ կայքեր) ակտիվություն ցուցաբերած թատերական բոլոր գործիչները, որոնք նշված օնլայն հարթակներում ակտիվություն են ցուցաբերել 2012 թ-ին: Այս տարի ընտրվել է 13 անվանակարգ. տարվա Online թատրոն, տարվա Online դերասան-դերասանուհի, տարվա Online պրոդյուսեր, տարվա Online թատերախումբ, տարվա Online հարմարեցված պիես, տարվա Online բեմադրող ռեժիսոր, տարվա Online թատերական քննադատ (լրագրող), տարվա Online փառատոն, տարվա Online բեմանկարիչ, տարվա Online պարային-երաժշտական ներկայացում, տարվա Online մանկական ներկայացում, տարվա Online ներկայացում:

Նշենք նաեւ, որ անվանակարգերում լավագույնը ճանաչվելու համար նախատեսված քվեարկության փուլը մեկնարկելու է փետրվարի 20-ին, երեկոյան ժամը 20.00-ին եւ ավարտվելու է մարտի 15-ին երեկոյան ժամը 24.00-ին:

Ս. Հ.

ԱԶԳ

# Մարզական

# «Այրուձին» Եվրոպայի ակումբային առաջնության փոխչեմպիոն

Մականախաղի հայկական «Այրուձի» թիմը հաջող ելույթներ է ունեցել Աթենքում կայացած Եվրոպայի ակումբային առաջնության 2-րդ խմբում՝ հռչակվելով փոխչեմպիոն: Մեր մականորդները նախնական փուլում ընդգրկված էին A խմբում, որտեղ գրավեցին 1-ին տեղը: Խմբային մրցաշարի ավարտական խաղում «Այրուձին» 8-3 հաշվով հաղթեց Քութայիսի համանուն թիմին: Մեր թիմից 2-ական գոլի հեղինակ դարձան Արսեն Գեւորգյանը, Էրիկ Ամիրբեկյանը եւ Նարեկ Մելքոնյանը, մեկական անգամ աչքի ընկան Վահե Կարապետյանն ու Դավիթ Գասպարյանը:



Հաջորդ խաղում «Այրուձին» ուժերը չափեց Պոզնանի «ՎԿՍ Գրունվալդի» հետ, որը հաղթող էր ճանաչվել B խմբում: Մրցակիցը բավականին ուժեղ թիմ էր, որն էլ հաղթեց 14-3 հաշվով: Ի դեպ, հենց այդ թիմն էլ դարձավ առաջնության չեմպիոն: Իսկ «Այրուձին» 2-րդ տեղի համար վճռորոշ մրցախաղում առավելության հասավ Սերբիայի «Սպարտակի» նկատմամբ՝ 4-3: Լարված մրցապայքարում անցած այդ խաղի առաջին խաղակեսում Արսեն Գեւորգյանը 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը, որին սերբերը պատասխանեցին 1 գոլով: Ընդմիջումից հետո Էրիկ Ամիրբեկյանը 3-րդ գոլը խփեց: Սակայն շուտով մրցակիցը վերականգնեց հավասարակշռությունը՝ 3-3: Մեր թիմին հաղթանակ պարգեւեց խաղավարտից մեկ րոպե առաջ Նարեկ Մելքոնյանի խփած հաղթական գնդակը:

«Այրուձին» իրավունք ստացավ հաջորդ տարի մասնակցելու 1-ին խմբի մրցաշարին: Ինչպես նշել է ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար **Հրաչյա Ռոստոմյանը**, այս հաջողությունը հայկական մականախաղի լավագույն արդյունքն է վերջին 22 տարիներին: Այն հիմք կհանդիսանա, որպեսզի մեր հանրապետությունում մականախաղն աստիճանաբար վերականգնի երբեմնի լավ ավանդույթները: Պետությունն էլ ուշադրության կենտրոնում է պահում մարզաձեւի հարցերը: Այս տարի ավելացել է պետբյուջեից մականախաղի հանրապետական ֆեդերացիայի ֆինանսավորումը՝ հասնելով 4,5 մլն դրամի:

Հայաստանի մականախաղի ֆեդերացիայի նախագահ **Խաչատուր Գիլոյանի** խոսքերով հայ մականորդները մարտականորեն են տրամադրված ու լրջորեն են նախապատրաստվում հուլիսի 21-26-ը Հունաստանում ազգային հավաքականների մասնակցությամբ անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը: Մեր հավաքականից բացի, խաղարկվող պարգեւների համար մրցավեճի կբռնվեն Բուլղարիայի, Կիպրոսի, Վրաստանի, Հունաստանի եւ Լատվիայի հավաքականները:

# «Բավարիան» հաջորդ փուլի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրեց

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում կայացան հերթական 2 հանդիպումները: Հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ ներկայացրեց Մյունխենի «Բավարիան», որը Լոնդոնում 3-1 հաշվով պարտության մատնեց «Արսենալին»:



Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Յուպ Հայնկես** («Բավարիա»)- Անգլիական թիմին մրցակցի դաշտում 3-1 հաշվով հաղթելը մեծ հաջողություն է մեզ համար: «Բավարիայի» նախորդ հանդիպումներն Անգլիայում այնքան էլ հաջող չէին մեզ համար: Մենք լավ սկսեցինք հանդիպումը եւ բովանդակալից ֆուտբոլ ցուցադրեցինք, հատկապես առաջին խաղակեսում: «Արսենալն» ուժեղ թիմ է եւ հաղթելու համար մեզանից մեծ ջանքեր պահանջվեցին:

Անցյալ տարի մենք չեմպիոնների լիգայում հասանք մինչեւ եզրափակիչ: Հաջողությունը կրկնելու համար պետք է հիմնվել փորձառության վրա:

**Արսեն Վենգեր** («Արսենալ»)- Առաջին 5 րոպեներին մենք լավ էինք խաղում: Սակայն մրցակիցն առաջին իսկ հարվածով գրավեց դարպասը, ինչը մեր պաշտպանությունում նյարդային իրավիճակ ստեղծեց: 2-րդ խաղակեսում հաջողվեց սթափվել, գոլ խփեցինք մրցակցի դարպասը, կարող էինք նաեւ հավասարեցնել հաշիվը: Իսկ «Բավարիան» հակագրոհի ժամանակ 3-րդ գոլը խփեց:

Մեզ հրոք բարձրակարգ թիմ էր դիմագրավում: «Բավարիան» շատ էֆեկտիվ խաղաց, հրագրեց գոլային պահերը: Իհարկե, պատասխան խաղում շատ դժվար կլինի: Սակայն պետք է փորձենք իրագործել անհնարինը: Հարկավոր է Գերմանիայում խաղալ այնպես, ինչպես խաղում ենք սեփական հարկի տակ: Իհարկե, բաց թողած 3-րդ գոլը զգալիորեն դժվարացրեց մեր խնդիրը, սակայն կփորձենք ամեն ինչ կարգավորել: Թիմի երկրպագուներն այսօր մեզ շատ լավ աջակցեցին: Ուստի ցավում եմ, որ չկարողացանք նրանց հաղթանակ պարգեւել, թեեւ տղաները ներդրեցին իրենց ողջ ուժերը:

1/8 եզրափակիչի մյուս խաղում պորտուգալական «Պորտոն» սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեց իսպանական «Մալագային»: Խաղի ելքը վճռեց 56-րդ րոպեին Մոուտինյուի խփած միակ գնդակը:

# Հայ լեռնադահուկորդները ձախողվեցին

Ավստրիայի Շլադմինգ քաղաքում կայացած լեռնադահուկային սպորտի աշխարհի առաջնությունում անհաջող ելույթներ ունեցան հայ լեռնադահուկորդները, որոնց մեծ մասը նույնիսկ վերջնագիծ չհասավ:

Կանանց ոլորավայրէջքում 21-ամյա ծաղկաձորցի Տաթեւիկ Մուրադյանը հենց մեկնարկում կորցրեց հավասարակշռությունը եւ ավարտեց ելույթները:

Անհաջող հանդես եկան նաեւ տղամարդիկ: Հայաստանի ներկայացուցիչներից ոչ մեկին՝ Դավիթ Խաչատրյանին, Արսեն Ղազարյանին, Յուրա Մանուկյանին եւ Արսեն Ներսիսյանին չհաջողվեց հասնել վերջնագծին:

Գերհսկա ոլորավայրէջքում էլ մեր մարզիկների ցուցանիշները բավականին համեստ էին: Արսեն Ներսիսյանը գրավեց 66-րդ տեղը, Արսեն Ղազարյանը 84-րդն էր, իսկ Դավիթ Խաչատրյանին չհաջողվեց հատել վերջնագիծը:

# Շուրջերկրյա ճանապարհորդությունը տխուր ավարտ ունեցավ

Շուրջերկրյա ճանապարհորդության մեկնած բրիտանացի 2 հեծանվորդներ՝ Փիթեր Ռութն ու Մերի Թոմփսոնը Թաիլանդում ճանապարհատրանսպորտային պատահարի զոհ են դարձել: Մեծ Բրիտանիայի հյուպատոսությունը զոհվածների ընտանիքներին իր օգնությունն է առաջարկել հեծանվորդների դին հայրենիք հասցնելու հարցում:

Ռութն ու Թոմփսոնը շուրջերկրյա ճանապարհորդությունը սկսել էին 2011-ի հուլիսին Բրիտանիայից: Մինչեւ օրս նրանք հեծանվով շրջագայել էին աշխարհի 22 երկրներում:

ՇԱԽՄԱՏ

# Գրիգորյանի դիրքն անսասան է

Ֆրանսիական Ռուշֆոր քաղաքում իր գերազանց ելույթներն է շարունակում միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը, որը վստահորեն գլխավորում է աղյուսակը: 5-րդ տուրում Կարենը նոր հաղթանակ տարավ՝ պարտության մատնելով վրացի գրոսմայստեր Տոռնիկե Սանիկիձեին: Դա հայ շախմատիստի 5-րդ անընդմեջ հաղթանակն էր: 6-րդ տուրում վիճակահանության քմահաճույքով միմյանց հետ մրցեցին Կարեն Գրիգորյանն ու Սամվել Տեր-Սահակյանը: Ինչպես սպասվում էր, մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Կարենն առաջին կես միավորը կորցրեց:

Հաջող է խաղում նաեւ Սամվել Տեր-Սահակյանը, որը 6 տուրից հետո 5,5 միավորով Վլադ-Քրիստիան Ջիանուի, Դավիթ Ջոջուայի եւ Անդրեյ Իստրատեսկուի հետ հետապնդում է Գրիգորյանին: 5-րդ տուրում Սամվելը պարտության մատնեց Ադրիեն Դեմուտին: 7-րդ տուրում Գրիգորյանը սեւերով կխաղա վրացի գրոսմայստեր Դավիթ Ջոջուայի հետ, իսկ Սամվելի մրցակիցը կլինի Անդրեյ Իստրատեսկուն:

B խմբի մրցաշարում անհաջող է հանդես գալիս ֆրանսահայ շախմատիստ Գուրգեն Հազարապետյանը, որը 5-րդ տուրում հաղթեց Ֆիլիպե Գույչարդին, իսկ հաջորդ մրցախաղում պարտվեց Մարիկա Թոյվենինին: Հազարապետյանը 6 հնարավորից վաստակել է 2 միավոր:

# Հայ ըմբիշներին չհաջողվեց բրոնզե մեդալ նվաճել

Թեհրանում ավարտված հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղարկությունում Հայաստանի հավաքականը հանդես եկավ ոչ հիմնական կազմով: Հակառակ դրան, մեր ըմբիշները վատ հանդես չեկան՝ 10 հավաքականների մրցավեճում զբաղեցնելով 4-րդ տեղը:



Նախնական փուլում Հայաստանի հավաքականն ընդգրկված էր A խմբում, որտեղ մրցակիցներն էին Ռուսաստանի, Կորեայի, Բելառուսի եւ Բուլղարիայի ըմբիշները: Մեր հավաքականը մեկնարկում հանդիպեց մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկի՝ ռուսների հետ: Միայն քաշային 2 կարգերում հայ ըմբիշներին հաջողվեց հաղթել: Մինչեւ 60 կգ քաշային կարգում Ալեքսան Միքայելյանը պարտության մատնեց Ռուստամ Խուչբարովին, իսկ Սարգիս Տոնոյանը (96 կգ) առավելության հասավ Մուսա Եվլոեւի նկատմամբ: Մեր մյուս 5 ըմբիշները՝ Հարություն Հովհաննիսյանը (55 կգ), Տիգրան Թորոսյանը (66 կգ), Վարշամ Բորանյանը (74 կգ), Հրաչ Հովհաննիսյանը (84 կգ) եւ գերծանր քաշային Վաչիկ Եղիազարյանը պարտվեցին մրցակիցներին:

2-րդ մրցախաղում հայ ըմբիշները բացահայտ առավելությամբ հաղթեցին բուլղարացիներին: 7 գոտեմարտերում էլ հաղթանակ տարան մրցագորգ դուրս եկած Հարություն Հովհաննիսյանը (55 կգ), Ալեքսան Միքայելյանը (60 կգ), Տիգրան Թորոսյանը (66 կգ), Ռաֆիկ Մանուկյանը (74 կգ), Հրաչ Հովհաննիսյանը (84 կգ), Սարգիս Տոնոյանը (96 կգ) եւ գերծանրքաշային Վաչիկ Եղիազարյանը:

Հայաստանի հավաքականը հաջող մրցելույթներ ունեցավ նաեւ հաջորդ 2 հանդիպումներում՝ միեւնույն 5-2 հաշվով պարտության մատնելով Կորեայի եւ Բելառուսի հավաքականներին: Հարություն Հովհաննիսյանը (55 կգ), Ալեքսան Միքայելյանը (60 կգ), Հրաչ Հովհաննիսյանն (84 կգ) ու Սարգիս Տոնոյանը (96 կգ) 2 հանդիպումներում էլ հաղթեցին մրցակիցներին: Կորեացիների հետ մրցավեճում հաղթեց նաեւ գերծանրքաշային Վաչիկ Եղիազարյանը, իսկ բելառուսների հետ գոտեմարտում մրցակցին պարտության մատնեց նաեւ Ռաֆիկ Մանուկյանը (74 կգ): Հայաստանի հավաքականը խմբում գրավեց 2-րդ տեղը եւ իրավունք ստացավ 3-րդ տեղի համար մրցավեճում բրոնզե մեդալները վիճարկելու Թուրքիայի ըմբիշների հետ:

Ցավոք, մեր ըմբիշներին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Թուրքերի հետ մրցավեճում հայ ըմբիշներից միայն Ալեքսան Միքայելյանը (60 կգ) հաղթանակ տոնեց: Մյուս 6 գոտեմարտերում մեր հավաքականի անդամները զիջեցին թուրքերին:

Մրցաշարի հաղթող դարձավ Ռուսաստանի հավաքականը, որը եզրափակիչում 5-2 հաշվով պարտության մատնեց Իրանի ընտրանուն:

# Աղվան Պապիկյանը միացել է սպարտակցիներին

Լեհաստանի «Լոձի» եւ ՀՀ երիտասարդական հավաքականի կիսապաշտպան Աղվան Պապիկյանը մինչեւ մրցաշրջանի ավարտը վարձավճարով հանդես կգա Մոսկվայի «Սպարտակում»: Նա երեկ Անթալիայում միացել է «Սպարտակի» երիտասարդական թիմին:

Չի բացառվում, որ Պապիկյանի ավագ եղբայրն էլ՝ Վլադիմիրը եւս միանա «Սպարտակին»: Փետրվարի 25-ին նա Մոսկվայում բուժզննում կանցնի: Եթե ամեն ինչ բարեհաջող լինի, ապա Վլադիմիրն էլ կտեղափոխվի «Սպարտակ»: Պապիկյանների տեղափոխությամբ զբաղվում է Յուրա Մովսիսյանի գործակալը:

# Խայտառակ պարտություն

Անթալիայում ուսումնամարզական հավաք անցկացնող Հայաստանի չեմպիոն «Ուլիսը» խայտառակ պարտություն կրեց Գրոդնոյի «Նեմանից»՝ 7 անպատասխան գնդակ ընդունելով սեփական դարպասը: Արդեն 3-րդ րոպեին Սավոստյանովը բացեց հաշիվը: Մինչեւ ընդմիջում Դենիսեւիչն ու Սավիցկին հաշիվը դարձրին 3-0: 2-րդ խաղակեսում բելառուս ֆուտբոլիստները եւս 4 անգամ գրավեցին «Ուլիսի» դարպասը: Աչքի ընկան Բոմբելը, Լեւիցկին, Գոստոդարն ու Սավոստյանովը:

Նշենք, որ անցած առաջնությունում «Նեմանը» 30 խաղում վաստակած 41 միավորով զբաղեցնում էր 5-րդ տեղը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հեգնանքով




# ՀՀ ընտրությունները գերմանական մամուլի հայելու մեջ

Գերմանական հեռուստատեսության առաջին, երկրորդ ալիքները՝ ARD, ZDF-ը, WDR ռադիոն օրվա կարճ լուրերի բաժնում չանդրադարձան Հայաստանի նախագահական ընտրություններին, առավել կարեւորելով, օրինակ, Կիպրոսում կայացած ընտրությունները եւ ԵՄ անդամ այդ երկրում առկա ֆինանսական ճգնաժամը, որ սկիզբ կամ շարունակություն է դնում՝ «պիտի մնա՞լ ԵՄ կազմում» եվրոպական արդի բանավեճին, փոխարենը գերմանական տպագիր մամուլն ու էլեկտրոնային լրատվամիջոցներն անտարբեր չմնացին լուսաբանելուց:

Հանրությանն առաջնորդող գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայտունգը» («ՖԱՑ»), «Զյուդդոյչե ցայտունգը» («ԶՑ») փետրվարի 19-ին տպագրել են նույն լուրը՝ չեզոք վերնագիր ընտրելով՝ «Սարգսյանի համար՝ երկրորդ պաշտոնաշրջան»: Վերոհիշյալ թերթերն իրենց համառոտ անդրադարձում, հենվելով ՀՀ ԿԸՀ տվյալների վրա, շեշտում են, թե ձայների 58, 64 տոկոսով հստակ հաղթանակ է տարել 58-ամյա գործող ռուսամետ նախագահը, որի երկրորդ պաշտոնավարումը կավարտվի 2018-ին, որից հետո, համաձայն սահմանադրության, այլեւ իրավունք չի ունենա իր թեկնածությունը դնելու: ԵԱՀԿ-ն նախագահական ընտրություններում առաջընթաց է նկատել, միեւնույն ժամանակ քննադատել ընտրարշավում մրցակցության պակասը, փոխանցում են «ՖԱՑ»-ն ու «ԶՑ»-ը:

«Դի վելթը» վերնագիր է ընտրել Րաֆֆի Հովհաննիսյանի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանի բառերը՝ «Ամոթալի ընտրություններ՝ բազմաթիվ խախտումներով»: Ստացվածի համաձայն Հայաստանի նախագահ Սարգսյանը վերընտրվեց: Երկրորդ տեղը գրաված Րաֆֆի Հովհաննիսյանը նրան հանդիմանում է ահաբեկելու, ձայներ գնելու, քվեաթերթիկները կեղծելու համար, իսկ ոստիկանությունը նշված մեքենայություններն «ակնհայտ մտացածին» է որակում, ծանուցում է գերմանական բիզնես էլիտայի նախընտրած վերոհիշյալ լրատուն՝ ներկայացնելով նաեւ ԱԺ փոխխոսնակ Շարմազանովի խոսքերը՝ «Այս ընտրությունները լավագույնն էին անկախ Հայաստանի պատմության մեջ»: «Դի վելթը» գրում է, թե նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը չի ճանաչում Սարգսյանի վերընտրվելը՝ հաղթողի դերը վերապահելով իրեն, եւ պահանջում 2008-ից պաշտոնավարող նախագահից ճանաչել պարտությունը: Արձանագրելով, թե ԵԱՀԿ ավելի քան 600 միջազգային դիտորդ է հետեւել ընտրությունների ընթացքին, թերթը նման մեծ ուշադրությունը պայմանավորում է 2008-ի ընտրություններից հետո 10 զոհ ունենալու փաստով: Նախկին խորհրդային հանրապետության համար նախագահական ընտրությունները ժողովրդավարության կարեւորագույն թեստ են համարվում: Սարգսյանի վերընտրվելն արդեն կասկածից վեր էր այն ժամանակ, երբ «Բարգավաճ Հայաստանի» սիրելի առաջնորդ Գագիկ Ծառուկյանը հայտարարեց, թե չի մասնակցում, իսկ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ պատճառաբանեց, թե տարիքը մեծ է նոր թեկնածության համար: Ընդդիմադիր 3 կարեւորագույն կուսակցությունները հրաժարվում են մասնակցել ընտրություններին, գրում է թերթը՝ չմոռանալով, թե Հայրիկյանի վրա կատարված առեղծվածային մահափորձն էլ ստվերել է ընտրական գործընթացը: 1991-ից անկախացած Հայաստանը տնտեսապես դեռ ոտքի չի կանգնում, բնակչության մեկ երրորդից ավելին աղքատության շեմից ցած է գոյատեւում, շուրջ մեկ միլիոն քաղաքացի արտագաղթել է, բացի դրանից՝ Ադրբեջանի հետ տարածքային երկարատեւ վեճ ունի ԼՂ-ի համար, եզրափակում է «Դի վելթը»: «Խռովարարություն եւ անտարբերություն հայաստանյան ընտրություններում» վերնագիրն է ընտրել ավստրիական «Դեր շտանդարտը»: «Խաչ դնելու փոխարեն մեկն իր կարմիր շրթնահետքն է թողել, մյուսն ընտրատեղամասում աշխատող շփոթված մարդկանց աչքի առջեւ կերել է իր քվեաթերթիկը, երրորդը՝ գյումրեցի մի կին, 5000-դրամանոցը դրել է ծրարի մեջ, ու քվեաթերթիկի վրա գրել. «Ինձ գնել չեք կարող», գրում է ավստրիական լրատուն՝ նշելով, թե շատ հայերի համար ընտրությունը մեծ իմաստ չի ունեցել, քանի որ այս անգամ ընդդիմադիր կարեւոր առաջնորդներն իրենց թեկնածությունը չեն դրել, ինչն ընտրողների շրջանում, ըստ ԵԱՀԿ դիտորդների, հանգեցրել է անտարբերության, վստահության պակասի: Նույն առաքելության դիտորդները նախորդ ընտրությունների հետ համեմատած արձանագրել են «հստակ բարելավումներ»: Խորհրդարանում միայն 5 պատգամավորով ներկայացված «Ժառանգության» առաջնորդը, ըստ նախնական արդյունքների՝ 36,7 տոկոս է հավաքել, նա չի ընդունում ընտրության արդյունքը, եւ երեքշաբթի օրը դեռ պարզ չէր՝ ԱՄՆ-ում ծնված 54-ամյա Հովհաննիսյանը որեւէ շարունակ բողոքի հանրահավաքնե՞ր է անցկացնելու, թե՞... Ի հակադրություն Սարգսյանի, Հովհաննիսյանն Արեւմուտքում ծնված իրավաբան, պատմաբան է, ինչպես հայկական Սփյուռքի բազմաթիվ ներկայացուցիչներ, նա էլ անզիջում կեցվածք ունի ԼՂ բանակցությունների հարցի վերաբերյալ: Ղարաբաղյան պատերազմի նախկին հրամանատար Սարգսյանը շարունակում է իր նախորդների ռուսամետ քաղաքականությունը: Ռուսաստանը նախկին խորհրդային այս հանրապետությունում արտերկրի իր ամենամեծ ռազմաբազան ունի, գրում է թերթը՝ նշելով, թե Ադրբեջանի ու Թուրքիայի՝ 25 տարուց ավելի ստեղծած շրջափակումը երկրին արտաքին քաղաքական կուրսի փոփոխության նվազ հնարավորություն է տալիս: Հայերն անվտանգության ճանապարհն են ընտրել, երեքշաբթի Սարգսյանի կատարած հայտարարությունից մեջբերմամբ է եզրափակել իր հոդվածը Մարկուս Բերնաթը ավստրիական «Դեր շտանդարտի» փետրվարի 20-ին գրած հոդվածում:

«Անարդար ընտրություններ», «Վստահաբար՝ ճիշտ մարդը չէ» վերնագրյալ հոդվածներով է ՀՀ նախագահական ընտրություններին անդրադարձել գերմանական taz-ը: Ձախ այլընտրանքային կարծիք ներկայացնող հիշյալ օրաթերթը գրում է, թե Սարգսյանի վերընտրվելը կանխատեսելի էր, ինչպես միջազգային դիտորդներն են նկատել, նվազ մրցակցության պայմաններում: Թերթը զուգահեռաբար ներկայացնում է 37 տոկոս ձայն ստացած Րաֆֆի Հովհաննիսյանի «անարդար ընտրություններ էին» գնահատականը, որ taz-ը վերնագիր է դարձրել, նաեւ՝ ԵԱՀԿ դիտորդների՝ «նախկին ընտրությունների համեմատ բարելավում է նկատվում» արձանագրությունը: Թերթի երկրորդ՝ «Վստահաբար՝ ճիշտ մարդը չէ» վերնագրյալ հոդվածում մեկնաբան Բարբարա Օերթելը գրում է՝ ինչպես 1991-ի անկախությունից ի վեր երկրի բոլոր ընտրություններում, այս անգամ էլ կրկնվեց իշխանության մասնակցության ողջ ռեպերտուարը՝ ցանկալի տեղում խաչ դնելու նպատակով ճնշումներ ընտրողների հանդեպ, ինչպես նաեւ՝ ձայների մեծամասշտաբ գնում: Ընտրողների խմբերը քարշ էին տալիս ընտրատեղամասից ընտրատեղամաս բազմիցս ձայն տալու նպատակով: Պաշտոնավարման երկրորդ շրջանը նոր ու հին նախագահի համար թեթեւ չի լինելու, գրում է taz-ի մեկնաբանը՝ նկատել տալով երկրի աղքատությունը, երիտասարդ, կիրթ զանգվածի երկրից հեռանալը: Թուրքիայի հետ հաշտեցման գործընթացն էլ առաջ չի գնում, քանի որ Անկարան դեռեւս հրաժարվում է ճանաչել 1915-ի ցեղասպանության իր մեղքը: Հակամարտությունը հարեւան Ադրբեջանի հետ կարող է ամեն պահի բռնկվել: Թվարկված ճնշող խնդիրներն հաշվի առնելով՝ ուղեսլաքներն արագ պիտի դրվեն, բայց դրա համար Սարգսյանը, վստահաբար, ճիշտ մարդը չէ, կարծիք է հայտնում taz-ի մեկնաբանը, երեւան հանելով, ինչպես մեջբերված մյուս լրատվամիջոցները, իր շահագրգռվածությունը Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 20.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: